



ՍԻՈՆ  
ԿՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ  
ԲԱՆԱԽՐԱԿԱՆ



ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐԿՐԱՆԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅԱՆ

ՆՈՐ  
ԵՐԶԱՆ

1955

ԽՅ.  
ՏԱՐԻ

«Սիւոն» ամիսնամակ արեւմտահայկէստանի լուսնային, գրական, գիտական, մշակութային, լեզուի և պատմական

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in JERUSALEM

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

<b>ԽՄԲԱԳՐԱԿԱՆ</b>		<i>հոկտ</i>
— Կրթական մշակման	Զ. Վ. Զ.	177
<b>ԿՐԹՆԱԿԱՆ</b>		
— Ի՞նչպես կարելի է ներքին խաղաղության սիրանալ	ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ	180
<b>ԲԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ</b>		
— Մանուան	Վ. ԱԶԳՐԱՄ ՄԱՎԵԱՆ	184
— Երգել	Գ. ՃԻՆՈՎԻԶԱՆ	184
— Երգ գալիքին	Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	185
— Անվերնագիր	ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՓՆՅԻ	185
— . . .	ՅՈՎ. Հ. ՇԻՐԱԶ	186
— Կեանք	" "	186
<b>ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ</b>		
— Պայ Արշակունցի	ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ	187
<b>ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ</b>		
— (տեւ) Յովնաննէս Թլիզուրանցի	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ	191
<b>ԵՐԱԺՇՏԱԳԻՑԱԿԱՆ</b>		
— Միջնադարեան հայ կոմպոզիտորներ	ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ	195
<b>ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ</b>		
— Հայ գրիչներ յԱսանա	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ	198
— " " ի Բալու	" " "	199
— " " ի Կեդի	" " "	199
— Աւսրալիոյ Հայ կեանքը	ԱՍՈՎԻԿ Ծ. ՎՐԻ.	201
<b>ԸՆԿԵՐԱՅԻՆ</b>		
— (Փոքրիկ պատմաւածիկներ)	Թրգմ. ԽՄԲ.	204
<b>Ս. ՅԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ</b>		
— Եկեղեցական-Բեմական		205
— Պատօսական		206
— Ամազերջի Մրցանակաբաշխութեան Հանդէս Փառ. Վարժարանի		207
— Ամազերջի Հանդէս Ամմանի Հերոսմեան Ազգ. Վարժարանի		207
— Ամազերջի Հանդէս Ս. Թարգմանչաց Վարժարանի		207
<b>Մանագր՝ Տ. Ռուբէն Արեւայ. Մանասեանի</b>		208
<b>Մանագր՝ Վսեմ. Տիար Գալուստ Կիւլպէնկեանի</b>		208

ՍԻՈՆ-ի Տարեկան բաժնեգիրն է՝  
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20  
*Redaction of the Armenian Monthly SION*  
*Armenian Patriarchate,*  
P. O. B. 4001  
Old City - Jerusalem  
Via Amman (Jordan)

# —≡ Ս Ի Ո Ն ≡—

ԻԹ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1955

≡ Յ ՈՒ Լ Ի Ս ≡

ԹԻԻ 7

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆԵՐ

Ուսումնական տարեշրջանը աւարտեցաւ: Ամենուրեք, ի մասնաւորի զազթաշխարհի հայաշատ կեդրոններուն մէջ, տեղի ունեցան ամալներ ի հանդէսներ: Մրցանակաբաշխութեան ուրախալի առիթով կարգացուեցան տեղեկագիրներ միամեայ կրթական գործունէութեան ու զուցէ ըսողներ ալ եղան, — ինչպէս սովոր էր ըսել բազմավաստակ ուսումնապետ-գաստիարակ Ռ. Պէրպէրեան —, «այսօր վարժարանս Ազգին կը նուիրէ այսֆան ընթացաւարտներ»:

Այս ընդհանուր խանդավառութեան ետին կայ սակայն տրտում երևոյթ մըն ալ. ատիկա հայ ուսուցչին պարագան է: Արտասահմանեան ամէն զաղութի մէջ, մասնաւոր Ազգային երկրորդական վարժարաններու համար կը փնտուրին որակաւոր և հմուտ ուսուցիչներ:

Իրտեք բոլորս ալ թէ ազատ ասպարէզներու հետ բազդատած, ուսուցչական ասպարէզը ընդհանրապէս և Հայ ուսուցչական պաշտօնը մասնաւորապէս, եթէ ոչ անբաղձալի, զոնէ անփառունակ զործ մըն է:

Դարաշրջանը որուն մէջ կ'ապրինք որևէ ժամանակէ աւելի դրապաշտ է: Ձեռք կրնար հանգուրժել, գէշ բացատրութիւն մը զործածելով՝ վարժապետներու:

Նորահաս սերունդը որ կուգայ Սփիւռքի հազիւ բարեկեցիկ կամ տնտեսական միջակ պայմաններ ունեցող ընտանիքներէ, կ'ուզէ անպայման ազատ ասպարէզի մը մասնագիտութիւնը ձեռք բերել, ապահովելու համար բարօր կեանք մը, վասնզի որևէ ասպարէզ արդի կեանքին մէջ իր մասնազէտը կը փնտուէ: Այս պայմաններուն մէջ երբ ուսուցիչներու տնտեսական վիճակը չի բարւոքուիր, պարզ է թէ անցնող սերունդին հետ պիտի նօսրանայ և չափազանց նուազի պատուական մեր ուսուցիչներուն թիւը: Այս իրողութիւնը լուրջ վասնզ մըն է և արժանի է մեր լայն հետաքրքրութեան երբ կը խօսինք յանուն մեր մշակոյթին, յանուն մեր ազգային:

Ձի բուեր հաւաստիացնել թէ Հայրենիքէն դուրս, հոծ զաղութներու մէջ կորսուելու վախը անհիմն է. որովհետև շատեր, սկեպտիկ փաստարկութեամբ

մը, Հայրենի հողին ինչպէս նաև Հայրենական շէն կեանքին պակասը կը դարմանեն հո՞ծ հայութեան մը ներկայութեամբը :

Ձի բաւեր Հայ ըլլալու հպարտութեամբ ապահովուիլ և ուս թօթուել սպառնացող լուրջ վտանգներու առջև : Այդ պիտի նշանակէր անյատակ յաւակնութիւն մը ու մենք իսկ . . . «մեր բաճկոնի ծակերէն պիտի տեսնէինք մեր հպարտութիւնը» :

Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ ամէն օր քիչ մը աւելի ականատես կ'ըլլանք տակաւ առ տակաւ իր թափին մէջ ուժգնացող տեղացի ժողովուրդներուն Ազգային Չարթօնքին. անոնց կրթական նախարարութիւնները սեղմումներ կ'ընեն մեր վարժարաններու ուսումնական ծրագիրներուն : Սիրայօժար կ'ընդառաջենք աւելի լայն բաժին մը տալու տեղական լեզուներու, այդ լեզուներով ալ կարգ մը դասեր աւանդելու :

Անհրաժեշտ պայման մըն է մատաղ սերունդին համար տեղական լեզուներն ու յարակից զիտելիքները ըստ պէտք սորվիլն ու իւրացնելը վասն վաղուան կեանքին : Բայց ասոր հետ մէկտեղ ունենալ նաև շատ ամուր ազգային-կրօնական դաստիարակութիւն մը բացարձակ ստիպողութիւն մըն է. վասնզի Ողբի և մանաւանդ Հաւատքի վրայ պիտի ուղէինք որ խարսխուած ըլլար ապագայ Տիպար Հայ մարդուն կեանքը :

Օտար մշակոյթներու և այլ ժողովուրդներու հետ շփումի գալը ապահովաբար բարեմասնութիւն մը պիտի աւելցնէ մեր իմացական և հոգեկան կարողութիւններուն : Չինական մշակոյթը իր պատեանին մէջ փակուած մնաց պարզապէս անոր համար որ հաստ կառօյցներով պարիսպ մը շինեց իր շուրջը : Փայլելու և զարգանալու համար կարևոր է տալն ու առնելը : Առաքինութիւն մըն է առնել զիտնալը, առաքինութիւն մը նաև՝ տալը :

Նմանապէս քրիստոնէական վարդապետութիւնը դարերէ ի վեր իր մէջ առած և լուծած է շատ մը ուղղափառ իմաստասիրական գրութիւններ և կըրցած է հաշտութեան եզր մը գտնել կրօնքին և զիտութեան միջև :

Ձի բաւեր Հայ ըլլալու հպարտութիւնը ունենալ միայն : Մեր առաջագրութիւնը պէտք է ըլլայ լաւ Հայեր պատրաստել միշտ զերազանցելու համար ինքզինքնիս և ինչո՞ւ չէ մեր նախորդները :

Հոս անաւասիկ երևան կուգայ Հայ ուսուցչին և Հայ դաստիարակին կարևորագոյն դերը, տրուած ըլլալով որ ապագայ սերունդը պիտի գայ անմիջականօրէն անոնց ազդեցութեան ներքև պատրաստուելով : Անշահախնդրութեան և զոհողութեան ասպարէզ մըն է ուսուցչութիւնը, մանաւանդ Հայ ուսուցչութիւնը : Այս պարզան սակայն պատճառ մը չէ բնաւ որ ազգովին թերանանք նուիրական պարտականութեան մը մէջ : — Դպրոցն ու ուսուցիչը : Ստոյգ է թէ ամէն Հաստատութիւն կը յատկանշուի իր մարդերով, դպրոցն ալ իր ուսուցիչներով : Անգութ և դաժան բան է վարժարանները ձգել իրենց անստոյգ պիւտճէներու և բացբու առջև : Անխիղճ արարք մըն է կասկածելի կարողութիւններով ուսուցիչներու վստահիլ ապագայ սերունդին դաստիարակութիւնը : Երբ մեր զուրգուրանքին և խնամքին առարկան ըլլալէ կը դադրեցնենք դպրոցը և ուսուցիչը, ուղղակիօրէն պատճառ դարձած կ'ըլլանք մեր կործանումին : Իբրև շատ պարզ երեւոյթ, առտնին կեանքի մէջ ամէն բանի լաւը կ'ուզենք

ուսնեակ, և լաւ բաներու լաւ կը վճարենք: Կոչին է պարագան դպրոցին և ուսուցչին համար: Իւրաքանչիւր ոք թող ինքզինքին պատասխանէ: Ամէն Հայ կը սիրէ և պէտք է սիրէ իր մշակոյթը: Հայ դպրոցը վառարանն է այդ մշակոյթին և Հայ ուսուցիչն ու Հայ մտաւորականը՝ զործաւորները այդ մշակոյթին: Տարօրինակ երեւոյթը հոն է որ կը սիրենք մեր մշակոյթը, կը խօսինք յանուն մեր մշակոյթին, կը փառաբանենք, սակայն կ'անտեսենք անոր զործաւորները:

Կ'ըսեն թէ Հայ ուսուցիչը կը նմանի այն լուսնահաւին՝ որ իր կուրծքի արինով կը դիեցնէ իր ձագերը: Եթէ կը հաւատանք որ Հայց. եկեղեցիէն ետք ամենէն զուրգուրալի Հաստատութիւնը որ մեր գոյութիւնն իսկ կ'երաշխաւորէ Հայ Ազգային Վարժարանն է, ապա ուրեմն համապատասխան հետաքրքրութիւնն ու խնամքը պէտք է ցոյց տանք: Ու այս ընելով բացառիկ զոհողութիւն մը չէ որ ըրած կ'ըլլանք՝ այլ պարտականութիւն մը: Ահաւասիկ թէ ինչու ընդհանուր տեղահանութենէն ետք և ամէն ատեն ուր որ զացինք, եկեղեցիին կից շինեցինք նաև Հայ Վարժարանը, ուր Մեսրոպեան զիրերուն հետ, մեր «մեծաքանչ ու ոսկեզնիկ» բարբառին հետ աւանդեցինք մեր պատմութիւնը որ ինքն իր մէջ մեծ դիւցազներգութիւն մըն է: Հակառակ իր բազմաթիւ արտում էջերուն, ունի նաև «բազում զործս արութեան»: Ահաւասիկ թէ ինչպէս Հայ վարժապետը անճրկած չմնաց իր առջև աչքերը լայն լայն բացած տղոց երբ կը պատմէր ջարդի, լացի, փախուստի պատմութիւն մը. վասնզի գտաւ միշտ հերոսական արարք մը, դիւցազներգական դէպք մը, եղելութիւն մը պատմելու:

Ազգային շատ մը հրատապ խնդիրներու քովն ի վեր հիմա ունինք նաև Հայ ուսուցչի տազնապը որ կարգախօսն է այլևս:

Ամենէն մեծ նահանջը արձանագրած պիտի ըլլանք մեր գաղթնայ կեանքին մէջ եթէ անհրաժեշտ և մեր պարտականութիւնը եղող Հայ վարժարանին և Հայ ուսուցչին հոգը անտեսենք: Որովհետև կրնայ ժամանակ մը զայ երբ ինքզինքնիս գտնենք բոլորովին նոր դասալբութեան մը առջև: Առանց Հայ ուսուցչին, Ս. Մեսրոպը այլևս դարերուն դիմաց «ադամանդէ ապառաժի մը նման» պիտի չկենայ: Մեր դիւցազնական պատմութիւնը գրքի մը կողքին մէջ պիտի ամփոփուի: Պիտի չունենանք Արեւմտահայ Գրականութիւն ու մեր զիրքերը պիտի ըլլան մէյ մէկ կուռքեր, վասնզի, «զիրք փակեալք կուռք են»: զիրքերը պիտի ըլլան մէյ մէկ կուռքեր, վասնզի, «զիրք փակեալք կուռք են»: Եւ ի վերջոյ, առանց հերոսական պատերազմ մը մղած ըլլալու, Հայրենիքը պիտի կորսնցնէ իր գաւազներէն լաւագոյն մաս մը...

Զ. Վ. Զ.

**ԿՐԹՆԱԿԱՆ**

**ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է**

**ՆԵՐՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԻՐԱՆԱԼ**

«Խաղաղութիւն բողոք մեզ, զխաղաղութիւն զիմ սամ մեզ. ոչ որպէս աւխարհոսայ՝ սամ ես մեզ» (ՅՈՎ. ԺԳ. 27):

Ամէն մարդ որ աշխարհ կուգայ կ'ուզէ խաղաղ ապրիլ: Խաղաղութիւնը մարդկային հոգիին արդար մէկ պահանջքն է: Քանզի մարդու հոգին ուրիշ բան չէ, բայց եթէ Աստուծոյ հոգիին մէկ կայծը: Տրեզիր քարարիչը խաղաղութեան Աստուած է: Աւ խաղաղութիւնը Անոր հոգիին տիրական մէկ յատկանիշը: Հետեաբար Անոր պատկերովը ստեղծուած մարդ արարածը սրտի զոհունակութիւն չունենար այս կեանքի մէջ մինչև որ տիրանայ անոր՝ որ իրեն հոգեկան ժառանգն է: Այս ներքին խաղաղութիւնը ոչ միայն մարդկային կեանքը անուշցնող ու զեղեցկացնող բնայթ մը կը կրէ, այլ նաև մարդ արարածը իր Աբարչին հետ կենդանի հաղորդակցութեան ու բնականոն յարաբերութեան մէջ կը պահէ:

Խաղաղութիւնը տրեզիրական պահանջ մըն է, մարդկային հոգիին զարաւոր օւ աղաղակող իղձը: Առանց այս խաղաղութեան մարդկային կեանքը կը կորսնցնէ իր հմայքը, ներգաշնակութիւնն ու միասնականութիւնը: Անհատ մարդիկ աւազի հատիկներու կը նմանին. խաղաղութիւնը տեսակ մը շաղախ է՝ որ կը միացնէ ու կ'եղբայրացնէ զանոնք իրարու հետ, իբրև մէկ մեծ ընտանիքի զաւակներ, եղբայրներ ու քոյրեր: Ինչ համեմատութեամբ որ կը պահի մեր մէջ փոխադարձ յարգանքի ու իրար հասկացողութեան հիման վրայ այս խաղաղ ապրելակերպը՝ նոյն համեմատութեամբ արեւկոծութիւններ, անհամաձայնութիւններ և բազմութիւններ իրենց գոյութիւնը պիտի պահեն մարդկային ընկերութեան մէջ, անհատներու, ընտանիքներու, ազգերու և պետութիւններու իրարու հետ ունեցած փոխ յարաբերութիւններու ընթացքին:

Խաղաղ ապրելակերպը անհատը ան-

դորը կը պահէ ֆիզիքապէս, կ'ազնուացնէ զայն բարոյական տեսակետէ և կ'երջանկացնէ հոգեպէս: Ըստ Շո անուն հեղինակի, «Խաղաղ ապրելակերպը առաքելութեան իր ետեւ ձգած նուիրական շուքն է»: Աւ որ առաքինի կենցաղ մը կայ հոն է խաղաղութիւնը միշտ՝ որպէս անոր անբաժան մէկ շուքը:

Խաղաղասիրութիւնը հոգեկան իղձ մըն է որ կատարելութեան կը մղէ զիտակից անհատը, զէպի լուսագոյն ապրելակերպի բարձրագոյն ոլորտները և զէպի Աստուծոյ փառաց գահը: Ահա՛ այս իսկ պատճառաւ Աբրազան Մատեանը կը յայտարարէ, «Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեցցին»: Յիրաւի ի՛նչ մեծ արժանիք և առանձնաշնորհում է այս՝ որ կը տրուի խաղաղասէր մարդոց: Քանի որ մեր Աբարիչը խաղաղութեան Աստուած է, անոր ձեռակերտ արարածներն ալ, եթէ զիտակցին իրենց կոչումին, խաղաղ ապրելակերպէն տարբեր ուրիշ ընթացքի մը չեն կրնար հետեւիլ, և պէտք չէ որ հետեւին, իբրև Անոր զաւակները և ներկայացուցիչները այս ընդարձակած աւալ տրեզիրքին մէջ: Առտի, ինչպէս Քորլըս իրաւամբ կը մտանանչէ, «Երանութիւն տրուած է ոչ թէ յաղթանակ շահոյին, այլ խաղաղութիւն հաստատողին»:

Խաղաղ ապրելակերպի հետեւիլ և մարդոց մէջ խաղաղութիւն հաստատել և տարածել իսկապէս մեծ հոգիներու յատուկ արարք մըն է՝ որ արժանի է ամէն զնահատութեան: Բայց խաղաղութիւնը ունի իր խոչընդոտները, լաւ ևս է ըսել իր թշնամիները:

Ա. Խաղաղութեան խոչընդոտները: Ըստ Բեդրաքի, «Մեր մէջ կը բնակին խաղաղութեան հինգ մեծ թշնամիները — ազահութիւն, փառամոլութիւն, նախանձ, բարկութիւն և հպարտութիւն»:

Ազահութիւնը մեր ունեցածէն դժգոհ ըլլալով աւելին ցանկալու միտումն է: Ազահ մարդ մը որքան ալ ունենայ չի գոհանար՝ միշտ աւելին կը ցանկայ, և այս աւելին ցանկալ՝ զինքը յարատեօրէն յուզուած ու զրզուած վիճակի մը մէջ կը պահէ: Այս տեսակ մէկը չի կրնար սիրտի խաղաղութիւն վայելիլ և մտքի անդորրութիւն ունենալ: Ատեհօք փոքր տղայ մը

տասը բէննի կ'ունենայ. երբ կը կորսնցնէ իր բէննիները կուլայ. բարի մարդ մը տեսնելով զայն կը դիտայ անոր վրայ և իրեն տասը բէննի կուտայ որ ուրախանայ: Փոքրիկը փոխանակ ուրախանալու կը սկսի աւելիլալ: Մարդը կը հարցնէ պատճառը թէ ինչու կրկին կուլայ: Տղան կ'ըսէ. «Եթէ այդ տասը բէննին չկորսնցնէի, հիմա քսան բէննի կ'ունենայի»:

Որքան ատեն որ մարդիկ այս աւելիլին ցանկալու տենչը ունին իրենց մէջ, չեն կրնար հանգիստ ապրելակերպի հետեւիլ, այլ կը մեան միշտ անհանգիստ, զանգատող ու դժգոհ: Ընկերը կ'ըսէ. «Ազահութիւնը աւելի կը սաստկանայ մարդու մէջ՝ երբ անոր հաւաքած ոսկիները շատնան»: Իսկ Առաքեալը կ'աւելցնէ, «Ուրկէ՞ են պատեւրազմեիրը և ուրկէ՞ կոխները ձեր մէջ, չէ՞ որ ձեր ցանկութիւններէն են ... կը ցանկաք և չունիք» (Յակ. Դ. 1-2): Սաղազ ու անխռով ապրելու համար պէտք չէ աւելիլին ցանկալ, այլ պէտք է եղածով բաւականանալ և գոհունակ սիրտ մը կրել ամէն ատեն ու ամէն պարագայի ներքև:

Փառամոլութիւնն ալ ազահութեան նման ուրիշ մոլութիւն մըն է որ մարդիկը իրարանցումի կը մատնէ յաճախ: Հողեկան մեծութենէ զուրկ և արտաքին ցոյցերու մէջ մեծութիւն վնասողներ ոչ թէ զայն չեն կրնար գտնել, այլ իրենց ունեցածն ալ կը կորսնցնեն և մարդոց ծաղրանքին առարկայ կը դառնան, ստեղծելով միանգամայն իրենց շուրջը նախանձողներու և հակաակորդներու հսկայ բանակ մը: Մարդիկ որքան փառքի ետեւ կը վազեն, ուղիւ և անուղիւ միջոցները ի գործ դնելով, անիկա նոյնքան իրենցմէ հեռու կը փախչի: Քանզի փառքը մեծութեան շուքն է: Եթէ մէկը այդ մեծութիւնը ունի իր մէջը պէտք չունի փառքին ետեւէն վազելու, անիկա կուզայ արդէն զինքը կը գտնէ:

Մարդիկ որ գոռոզաբար ուրիշները վար զարնելով և անոնց արժանիքը ոտնակոխելով և կամ զանոնք իր սանդուխ գործածելով իրենց անձը միայն վեր բարձրացնելու կը ջանան, ոչ միայն այս աշխարհի վրայ խաղաղութիւն չեն կրնար հաստատել, այլ եղած խաղաղութիւնն ալ կը վտանգեն ու կը վրդովեն: Ասկէ է որ ընկերութեան մէջ կոխներ, բաղխումներ ու անհամաձայ-

նութիւններ կը ծագին միշտ: Ըստ Պալ-զաքի, «Փառամոլութիւնը տեսակ մը թոյն է»: «այն որ ներս կ'առնէ ու կ'իրացնէ այս թոյնը ոչ միայն կը կորսնցնէ իր արժանիքը, այլ նաև չարիքի մը աղբիւր կը դառնայ մարդկութեան համար: Ահա՛ այս իսկ պատճառաւ երնկ իրաւունք կ'ունենայ ըսելու, «Մարդու մը արժանիքը այն ատեն միայն ի յայտ կուգայ երբ նա ազատագրուի փառամոլութենէն»:

Նախանձը նաև թշնամի մըն է խաղաղութեան: Բարի նախանձը որքան օրհնութիւն մըն է և մրցակցութիւն ու յառաջդիմութիւն յառաջ կը բերէ, ընդհակառակը չար նախանձը նոյնքան անէծք մըն է մարդկութեան համար: Զար նախանձը անհատները իրարու կը ձգէ, ընդանիքներու միջև բաղխումներ կը ստեղծէ, ազգերն ու պետութիւնները անհանդարտ ու խռովեալ վիճակի մը կը մատնէ, և իրարու ձեռքէն հողեր գրաւելու կ'առաջնորդէ, և որով աշխարհի խաղաղութիւնը հիմէն կը խախտէ:

Շատ մը կոխներու և պատերազմներու պատճառը միթէ այս չար նախանձը չէ՞, ինչպէս Սրբազան Առաքեալը կը մատնանչէ, «Կը նախանձիք և չէք կրնար ձեր ուղածին հասնիլ, կը պատերազմիք ու կը կուրիք, բայց չունիք» (Յակ. Դ. 2): Սիրվանդէս կ'ըսէ. «Նախանձը իրերը խռորացոյցով կը դիտէ, և այդ իսկ պատճառաւ փոքր բաները չարէն աւելի կը մեծցնէ — զաճաճը հսկայի և կասկածը իրականութեան կը վերածէ»: Եւ մարդիկ որքան ատեն որ իրենց ընկեր արարածներուն ունեցածը այսպէս խռորացոյցով կը դիտեն և կը նախանձին անոնց վրայ, իրենց մէջ պիտի չպակտի իրարու հանդէպ տարակոյսներ, հակառակութիւններ, և երբեմն ալ բաղխումներ ու կոխներ:

Բարկութիւնը միւս կողմէն ուրիշ թըշնամի մըն է խաղաղութեան: Իրականութեան մէջ բարկութիւնը անասնական կիրք մըն է, և մարդիկ քանի ազատագրուած չեն այս կիրքէն՝ իրարու հետ միշտ խընդիրներ պիտի ունենան և զիրար պիտի բզբտեն ու վարկաբեկին: Երբեմն բարկութեան նոպային մէջ խօսուած մէկ կծու խօսքը և կամ անուած սխալ մէկ քայլը որքա՛ն անհաճոյ հետեւանքներ կ'ունենայ: Ցեղին մէջ խաղաղութիւն կը տիրէ այն ա-

տեն երբ մարդիկ ազատագրուին այս անասնական կիրքէն: Ինքնակրթութիւնը, զօրաւոր կամքը, դաստիարակութիւնը և կրօնքը կ'օգնեն մեզի մեղմացնելու և չէզոքացնելու բարկութեան այս կիրքը մեր մէջ:

Հպարտութիւնը նմանապէս մարդու մէջ արմատացած ուրիշ չար բնաւորութիւն մըն է որ կը սպառնայ խաղաղութեան, և իր աշխատի հետեանքներով մարդիկ իրարու կը ձգէ յաճախ: Այս կիրքն ալ կրնայ մեղմանալ, և կամ իր ուղղութիւնը փոխել ու բարի փառասիրութեան փոխուիլ ինքնակրթութեամբ, ազօթքով և յարատե աշխատութեամբ: Գիտակից, սկզբունքի տէր ու քրիստոնէական ազնիւ նկարագրով օժտուած մէկու մը համար որքան պախարակելի թերութիւն մըն է ազահ, փառամոլ, նախանձոտ ու բարկացոտ ըլլալ՝ նոյնքան անպատուարներ ու նուաստացուցիչ է հպարտ է ըսուիլ:

Հրէից իմաստունը կ'ըսէ. «Կոտորածին առջևէն հպարտութիւն և կործանման առջևէն ամբարտաւանութեան ոգին կ'երթայ» (Առակ. ԺԶ. 18): Առաքեալը կ'ըսէ. «Բայց հիմա ձեր ամբարտաւանութիւնովը կը պարծենաք. բոլոր այսպիսի պարծանքները չարութիւն են» (Յակ. Դ. 16): Իրաւամբ հպարտութիւնը բոլոր թերութիւններու արմատն է: Թերութիւններ՝ որոնք մարդկութեան հանգիստը վրդոված են միշտ և կը վրդովեն:

Բ. Արսաբիկն ու ներքին խաղաղութիւն: Խաղաղութիւնը երկու մասի կրնանք բաժնել, արտաքին և ներքին: Արտաքին խաղաղութիւնը մարդոց իրարու հետ ունեցած բարւոք յարաբերութիւնն է, ընտանիքներու, ազգերու և պետութիւններու միջև հաստատուած սիրալիր ու փոխադարձ յարգանքը: Իսկ ներքին խաղաղութիւն ըսելով կը հասկնանք քրիստոնեայ հաւատացեալին սրտի զոհունակութիւնը, մտքի անդորրութիւնն ու խղճմտանքի հանգստութիւնը: Վերջինը սակայն աստուածատուր պարզեմըն է՝ զոր կը վայելենք իբրև հետեանքը Աստուծոյ հետ մեր ունեցած կենդանի յարաբերութեան: Արտաքին խաղաղութիւնը կրնայ մեզ ներքին խաղաղութեան առաջնորդել, բայց չի կրնար տալ մեզի ներքին խաղաղութիւնը: Ներքին խաղաղութիւնը սակայն արտաքին խաղաղութիւնը կրնայ

ապահովել: Որովհետև առաջինը արտաքին պայմաններէ կախեալ է և հետեւորար փոխական է և ժամանակաւոր, իսկ վերջինը ներքին է, հոգեկան ու անական, որքան ասեն որ անհատին հոգեկան բնականոն վիճակը չէ խանգարուած:

Այս մեայուն ու ներքին խաղաղութիւնը Յիսուս՝ մեր հոգևոր կեանքի առաջնորդը, ապրեցաւ, քարոզեց և թէ մեզի ժառանգ թողուց ըսելով, «Խաղաղութիւն կը թողու՞մ ձեզի, իմ խաղաղութիւնս կուտամ ձեզի, և ոչ թէ որպէս աշխարհ կուտայ» (Յովհ. ԺԴ. 27): «Ոչ թէ որպէս աշխարհ կուտայ» ասացուածքը ցոյց կուտայ թէ Յիսուս խոտացած այս խաղաղութիւնը աշխարհի խաղաղութենէն բոլորովին տարբեր, հոգևոր բնոյթ մը կը կրէ: Աշխարհի տուած խաղաղութիւնը արտաքին է, աշխարհ զայն այսօր կուտայ և վաղը ետ կ'առնէ, սակայն Յիսուսի տուած խաղաղութիւնը ներքին է և մեայուն: Պօղոս Առաքեալի բառերով, «Աստուծոյ խաղաղութիւնը վեր է ամէն միտքէ, որ մարդոց սիրտերն ու միտքերը կը պահպանէ Յիսուս Գրիստոսով» (Փիլիպ. Դ. 7):

Այս ներքին խաղաղութիւնը ապրիլ և զայն տարածել երկրի վրայ մարդկային կեանքի նպատակակէտն է և քրիստոնէական կենցաղի բնականոն ու տրամաբանական հետեանքը: Քրիստոնեայ ըլլալ Աստուծոյ թագաւորութեան քաղաքացի ըլլալ է: «Աստուծոյ թագաւորութիւնը ուտելիք ու խմելիք չէ, հապա արդարութիւն, խաղաղութիւն և խնդութիւն Հոգւով Սրբով» (Հոովմ. ԺԴ. 17): Ուրիշ խօսքով, ուրախ, անդորր ու խաղաղ ապրելակերպ մը: Երբ Յիսուս ծնաւ, հրեշտակներ աւետեցին մարդոց և ըսին, «Յերկիր խաղաղութիւն»: Պօղոս Առաքեալ այս ներքին խաղաղութիւնը Սբ. Հոգիին պտուղներէն մին կը նկատէ (Փաղ. Ե. 22): Այն որ Սբ. Հոգիով օժուէ կեանք մը կ'ապրի, այս խաղաղութիւնը անոր կեանքին անբաժան մէկ մասն է: Սաղմոսերգուն կը յայտարարէ. «Տէրը Իր ժողովուրդը խաղաղութեամբ պիտի օրհնէ» (Սաղ. Իթ. 11):

Դ. Խաղաղութիւնը ձեռք բերելու միջոցներ: Էմբրսըն կ'ըսէ. «Ոչ մէկ բան քեզի խաղաղութիւն կրնայ բերել. բացի քեզմէ»: Խաղաղութիւնը դուրսէն պէտք չէ ակնկա-

իւն, ճանաւանդ ներքին խաղաղութիւնը ուրիշները չեն կրնար մեզի տալ, պէտք է որ մենք անոր ետեւէն ըլլանք, փնտսենք ու գտնենք զայն:

Պատեւու համար զայն, նախ՝ պէտք է որ մենք զիտակցութեան գանք և զգանք խորագէտ անոր կարիքը մեր ներսիցին: Պետոս առաքեալ կ'ըսէ. «Ով որ կ'ուզէ կեանքը սիրել ու բարի օրեր տեսնել, իր լեզուն թող դադարեցնէ չարութենէ . . . և խաղաղութիւն փնտռէ» (Ա. Պետ. Գ. 10-11): Ըստ Թովմաս Բէմրացիի, «Սաղաղութիւնը այն ատեն կրնանք վայելել երբ մեր սիրտը չզատապարտէ մեզ յանցանքի մը համար: Աստի, եթէ սխալ մը զործած ենք՝ պէտք է խոստովանինք զայն, եթէ մէկու մը անարդարութիւն ըրած ենք՝ պէտք է ներողութիւն խնդրենք անկէ, եթէ չար ընթացքի մը հետեւած ենք՝ պէտք է ետ դառնանք անկէ, և ի մի խօսք, եթէ մեղքի տիրապետութեան ներքե ենք՝ պէտք է որ զջնջուով ու ապաշխարութեամբ Աստուծոյ զառնանք և Անոր ճամբաներէն քայենք: Ասիկա է անուելիք կարևոր ու առաջին քայլը խաղաղութիւն ձեռք բերելու համար: Երկրորդ՝ պէտք է որ զօրացնենք Աստուծոյ հետ մեր ունեցած կապն ու ներքին հաղորդակցութիւնը որ կարենանք լեցուել այս ներքին խաղաղութեամբ: Քանզի Աստուած է, մարդիկ որքան շփուին Անոր հետ նոյն համեմատութեամբ կը լեցունին Անոր մեզի տալիք այս ներքին խաղաղութեամբ: Խաղաղութիւն մը որ վեր է ամէն միտքէ և կը լեցնէ մեր միտքերն ու սիրտերը երկնային օրհնութիւններով:

Նոյնպէս՝ պահել ու մշակել ևս պէտք է այս խաղաղութիւնը մեր մէջ, օր ըստ օրէ Ս. Գրոց ներշնչութիւններով, աղօթքով և առաքիլն արարքներով լի քրիստոնէական բարձր կենցաղի մը հետեւելով: Ամէն ոք պարտի մշակել ու տարածել զայն: Քանզի ասիկա ընել երջանկութեան կ'առաջնորդէ մեզ և մեծ արժէք կուտայ մեր ապրած կեանքին, ինչպէս նաև կը բազմապատկէ մեր օգտակարութիւնը հանդէպ մեր նմաններուն:

Այս ներքին խաղաղութիւնը վայելել քրիստոնէական կենցաղի անբաժան մէկ մասն է: Թխուս ըսաւ. «Այս բաները ձեզի

խօսեցայ որպէսզի ինձմով խաղաղութիւն ունենաք» (Յովհ. ԺԶ. 33): Նմանապէս ուրիշ առիթով եկաւ և անոնց մէջտեղը կեցաւ և ըսաւ. «Սաղաղութիւն ձեզի» (Յովհ. Ի. 19): Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Վասնզի Անիկա (Յիսուս) է մեր խաղաղութիւնը» (Եփես. Բ. 14), «և եկաւ խաղաղութիւն քարոզեց ձեզի՝ որ հետուն էիք, և անոնց՝ որ մօտ էին» (Եփես. Բ. 17):

Ով պէտք չունի այս խաղաղութեան: Տիեզերական է այս խաղաղութիւնը, ամէն մարդ կը կարօտի ատոր: Ամէն ընտանիք, ամէն երկիր ու ամէն պետութիւն խաղաղ ապրելակերպի կարիքը կը զգայ խորագէտ: Աշխարհը կրնայ խաղաղիլ, պայմանաւ որ մարդիկ նախ տիրանան այս ներքին խաղաղութեան, որտի հիմնական փոփոխութեան ու աստուածահաճոյ ապրելակերպի մը: Եկեղեցին շարունակ կ'աղօթէ՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»: Պատարագիչ քահանան սրբազան պաշտամունքի ընթացքին մէկէ աւելի անգամներ «Սաղաղութիւն ամենեցուն» ըսելով մարդոց մէջ տարածելու կը ջանայ աստուածային այս խաղաղութիւնը:

Այս խաղաղ ու անդորր ապրելակերպը սակայն անհատներէ պէտք է սկսի: Քանզի երբ անհատները տիրանան այս ներքին խաղաղութեան, այդ անհատներէ բազկացեալ ընտանիքներն ալ ինքնաբերաբար կը խաղաղին ներքնագէտ: Եւ երբոր ընտանիքները խաղաղին՝ այդ ընտանիքներէ կազմուած ազգերն ու երկիրները նաև բնական իմն բերմամբ կը հետեւին խաղաղ ապրելակերպի մը, և որով կ'ապահովուի միջազգային ու տիեզերական խաղաղութիւնը աշխարհի վրայ: Ահա՛ այն ատեն շատ զիրութեամբ մարդոց սուրբըրը խոփելու կը վերածուին, և զայլը զառնուկին հետ կը ճարակի առանց փնտսելու զիրար: Եւ մարգարէներու զարբեր առաջ երազած մարդկութեան սոյն սկեզարը այլևս իրականութեան մը կը վերածուի:

Ամէն մէկ զիտակից քրիստոնեային տեսլականը պէտք է ըլլայ փութացնել օր առաջ այս երանութեան սոկեղարը, Քրիստոսի աշխարհ բերած «յերկիր խաղաղութիւն»ը, այլ խօսքով, Աստուծոյ թագաւորութեան երկրի վրայ հաստատուիլ:

Գր. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ  
Ֆեզնո, Գալիւ.

## Մ Ա Ն Ո Ր Ա Ն

Գիտէի միտք թէ կայիր տեղ մը հեռու մեզմէ շատ,  
 Թէ պիտի որ մ'ալ գայիր երբ ձիւնն իջնէր մազերուս,  
 Գեղեւէին երբ փայլերս, եւ աչուրներս՝ անյոյս,  
 Ալ փակուէին քիչ առ քիչ յագեցումով մը՝ հանդարտ:

Ու հաւատած այն ասեմի՝ կը կարծէի սակաւին,  
 Թէ պիտի քեզ ընդունիլ կարենայի ես սիրով,  
 Փոքորկայոյզ ծովէն վերջ ինչպէս անդորրը ափին,  
 Խաղաղ ծոցիդ մէջ անփոյթ ալ հանգչելու պատրաստով:

Բայց փայլերուդ կը լսեմ երբ սրտում ձայնն այսօր մտ,  
 Կը մտածեմ թէ փոխուած նին կերպարանիդ է իրա՞ւ.  
 Քեզ չեմ հանչեար, ու կ'ուզեմ որ չհանչեաս զիս բնաւ...:

Զի կը դառնայ կեանքն հիմա յսակ այնքան՝ գեղեցիկ,  
 Որ զրկուած կրկնապէս իր շնորհիկն արդ կը զգամ,  
 Ու կը փարիմ ոտերուն՝ որ գէթ ներէ ա՛յս անգամ:

Վ.Ա.Հ.Բ.Մ Մ.Ս.Վ.Ե.Ս.Ն

## Ե Ր Գ Ե Ն

Երգել կը բաղձայ հոգիս այս գիշեր,  
 Երգել ժամերով ու սրլանալ վե՛ր,  
 Մոռնալ պահ մը գէթ վիշտերն իր բոլոր,  
 Լեցուիլ խնդութեամբ մ'անհո՛ւն, անսով՛ր...:

Երգել ես կ'ուզեմ անցեալըս մեղոյց,  
 Անդարձ սէրերը անոր վերջիցի,  
 Երգել ես կ'ուզեմ ներկան սրտմանոյց,  
 Թեքեցած հոգուով մութ համբէս փայլել...:

Երգել ես կ'ուզեմ ցաւերըս ամբողջ,  
 Մտէս վտարել խոհերն վատառողջ.  
 Երգե՛լ վերանա՛լ, երգե՛լ արբենա՛լ,  
 Երգել ապագան անորո՞ւ, մոռնա՛լ...:

Սէրերս ամբողջ, սէրերս սրտում,  
 Յոյզերս ներկայի, վէրերս անպատում  
 Երգել ես կ'ուզեմ, երգել միմիայն,  
 Երգել անդադրում, երգել անպայման:

Քանզի սրտում է հոգին առանց երգ,  
 Խո՛ր, անբուժելի՛ են իր ցաւն ու վէրֆ:

Երուսաղեմ

Գ. ՃԻՆԻՎ.ԻԶԵՍ.Ն

### ԵՐԳ ԳԱԼՆՔԵՐՆ

Պիսի ըլլան, — ազնրագոյն  
Յեղ մը պիսի գայ սակաւին,  
Ազասութեան բոցն իր հոգւոյն՝  
Իմաստութեան լոյսն հայեացքին:

Եկողներն այդ բարի, ուժեղ,  
Պիս' չըբափեն կարիլ մ'արիւն,  
Տիրապետեն պիս' ամէն տեղ,  
Հուրին, հողին, օդին, ծովուն:

Ազգ - ազգի հետ, երկիր - երկրի,  
Պիսի ապրին որպէս ընկեր,  
Ամէն սիրտի մէջ ու միտքի  
Եղբայրութեան՝ սրտով սէրն:

Պիսի ծաղկին արուեստներ նոր,  
Պիս' երգ մ'ըլլայ ամէն մէկ կեանք,  
Եւ աւելարն՝ Գրախոս մ'աղուոր,  
Յուզէ Երկինն՝ Երկրի նուագն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Անգլերէնէ թարգմանութիւն  
Հեղինակին անունը ծանօթ չէ մեզի

### Ա Ն Ա Ե Ր Ն Ա Գ Ր Ր

Սիրում եմ ես կեանքի երգը զուարթ,  
Ու հող, ու ծով, ու աստղ, ծաղիկ ու մարդ.  
Նարքնչէ ամա՛ռը, աւունը ոսկեո՛ղ,  
Զմրան բուֆ-նժոյզը ձիւնէ բաւով. —  
Սիրում եմ պայքարի կրակը վառ.  
Ու սիւր լուսաբիր, գիշերը մառ:  
Տիեզերքն եմ սիրում սրտիս թափով,  
Որի հետ կապուած եմ հազար կապով:

Գարեթի Լեզնեղը

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՕՆՅԻ

## Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ա Ն Ք

\* \* \*

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

Որպես վեսի օրերն հայոց՝  
 Այնքան խորն են ձորերն հայոց,  
 Այնքան խորունկ ու այնքան մուր,  
 Որ զեները մեր յորձանուս  
 Մթնում անից մանչացող  
 Մօրը կորցրած ու զուրս փախչող  
 Վիշապածագ են ինձ քրոււմ՝  
 Մեր ձորերի մուր անձաւում:  
 Բայց չզիտեմ՝ ձորե՞րն են մեր  
 Ոգուն զրել խորքեր խորին,  
 Թե՞ մեր ոգին է ռապիել  
 Իր խորութիւնն այս ձորերին:  
 Որպես կամփ դարերն հայոց՝  
 Այնքան բարձր են սարերն հայոց,  
 Այնքան բարձր ու այնքան վեր,  
 Որ քիչեք մեր հակաօդ  
 Միտ ամպերի ձեռնն է սրբել,  
 Ու կը քրւա՝ զազարներէից  
 Մարդ կարող է ասոյ համբուրել:  
 Բայց չզիտեմ՝ մեր ոգի՞ն է  
 Բարձունք զրել մեր լեռներին,  
 Թե՞ մեր ոգուն՝ սարերն են վին  
 Տրել բարձունք աստղային ...

### Կ Ե Ե Ո Ջ

Մտի օրոցից երբ աշխարհ մտայ՝  
 Աշխարհում՝ աշխարհ մօր սերը զտայ ...  
 Յօնքերս լծակն է իմ նժարի,  
 Այնքերս նրա զոյգ քստերն արի,  
 Եւ կեռեցի մօրս սերը սուրբ,  
 Որ ինչքան մեծ էր, այնքան խոր ու նուրբ.  
 Հիմալայն իբրեւ կեռամար դրի՝  
 Վեր քաւա լեռը հետն իր նժարի.  
 Մովերը դրի՝ վեր ելան կրկին,  
 Վար քաւեց մօրս սերը սրբազին.  
 Աստղաբոյլերը՝ դրի կեռամար, —  
 Նորից մայրիկիս սերը քաւեց վար ...  
 Քո սերն, իմ սիրած, քո սերն էլ դրի՝  
 Վեր ու վար արին նժար նժարի ...  
 Բայց երբ անսահման իմ հայրենիքից  
 Մի բուռ հող դրի՝  
 Եկաւ համբուրեց նժար նժարի ...

**ՊԵՏՐԱՆՔԱՆԵՐԵՐԻ ԲԵՆԵՍԻՄԻՐԱԿԱՆ**

**ՊԱՊ ԱՐԾԱԿՈՒՆԻ**

Ի՞նչ սահմակեցուցիչ պատկեր մը կը ներկայացնեն այս եղբայրները: Ընտանիքին պետք՝ Վարդան, Պարսիկ թագաւորի կողմակից, անարգ դաւաճ կը սպանուի իր հարազատ եղբայր Վասակէն<sup>(4)</sup>: Վահան, հողիով մարմնով Շապուհին սպասարկուհի մը, իր իսկ զաւակին ձեռքով կը սպանուի<sup>(5)</sup>: Այս երկու դէպքերու մասը սպաւորութիւնը կարծես քիչ մը կը մեղձանայ Վասակի եղբերական վախճանով, Շապուհի հրամանով մորթազերծ եղած<sup>(6)</sup>: Այս մասին յետոյ:

Հայ պատմութեան լուսաբանութեան սիրոյն պէտք է առարկայական ուսումնասիրութեան ենթարկուի Մամիկոնեան ընտանիքը, Չորրորդ և Հինգերորդ դարերու մէջ: Պահ մը մէկզրի գնելով անխորհուրդ խանդավառութեան առատորէն հիւսած դաժնիքները անոնց գլխուն, պէտք է ծանօթանալ քաղաքական այս անձնաւորութիւններուն և կըռտողատել անոնց գործունէութիւնը հայ պետական կազմի մէջ: Անկողմակից Յ. Մանանդեան կը համաձայնի ֆրոֆ. Մարկուարտի հետ թէ նման ուսումնասիրութեան ժամանակը հասած է<sup>(7)</sup>:

Իսրայէլի մեր պատմութեան: Պարսկա-Բիւզանդական պատերազմը, սակայն, կ'երկարէր: Տարիներ կ'անցնէին, և հակառակ Շապուհի քանի մը զինուորական յաջողութիւններուն, Վճռական յաղթանակ մը, որ ջախջախէր Բիւզանդական ուժերը վերջնականապէս, և հարուստ Միջագետքը զարծնէր պարսկական նահանգ, կարելի չէր եղած: Յայտնապէս, Կոստանդիոս Կայսրը պաշտպանողական զգուշաւոր ազդեակութիւն կը հետապնդէր:

Իսկ զինուորական և առևտրական մեծ կեդրոն Մծրինի յաջող զիմադրութիւնը Շապուհի ահարկու գրոհներուն, խոր տպաւորութիւն պիտի ստեղծէր հայ արքունիքի մէջ: Համբաւաւոր քաղաքը պաշարող պարսիկ բանակի մէջ հայկական զօրագունդեր ալ կը գտնուէին: Անոնք, ի հարկէ, ակնառես կ'ըլլային պարսիկ թագաւորի ձախողութեան:

Երեք յաջորդական պաշարումներն ալ, 338ին, 346ին և 350ին, մին միւսէն աւելի կատաղի, մանաւանդ վերջինը, երբ պաշարող բանակէն քսան հազար զիւններ կատարած Շապուհի մուկիլն թափը կոտորեցին, և տեսակ մը ազդարար եղան Միջագետքի և Սիւրիոյ ժողովուրդներուն, ինչպէս նաև Հայաստանին, թէ կայսերական ուժը թէև կրնար ճակատամարտներ կրօնցնել, բայց վերջ ի վերջոյ անպարտելի կը մնար և կը շահէր բախտորոշ պատերազմը:

Մծրինի երկրորդ պաշարման ձախողութեան յետոյ, Արշակ Թագաւոր և Հայաստանի Բիւզանդական Կուսակցութիւնը անհամբեր խլրտումով կը ձգտէին վերջ տալ մինչև այդ շարունակուած հարկադրական գոյափոխակին, իրենց տեսակէտէ անգոհացուցիչ հայ քաղաքական եզրնադարձի, և վերստին որդեգրել այլևս աւանդական դարձած Բիւզանդական քաղաքականութիւնը: Բնականաբար Կոստանդիոս Կայսրն ալ շարունակ ճնշում կը բանեցնէր: Ընդում մը, որ առաջին օրերուն բարբարոս ձևով մը կը յայտնուէր երբ Կայսրը իր մօտ պատանդ գանուող հայ արքայազուններէն Արշակի եղբայր Տրդատը սպանել կուտար:

Երբ 350ին Մծրինի հերոսական զիմադրութիւնը խորտակեց Շապուհի յոյսերը, Արշակ Թագաւորի գործունէութիւնը վճռական մղում ստացաւ:

Աւրիշ պարագաներ ալ քաջալերեցին Արշակը: Չոր օրինակ, Պարսկաստանի հիւսիս-արևելեան սահմաններուն վրայ Թուրանական ցեղեր, գլխաւորաբար Մասակէթ կոչուած, արշաւեցին Շապուհի հողերը: Այս շարժումը, վաչկատուն ցեղի մը սոսկ աւարտական մէկ յարձակումը չէր: Այլ մեծածաւալ պատերազմական գործողութիւն, որուն անմիջական սպանալիքը ստիպեց Շապուհին հեռանալ Մծրինի առջեւ, և որ պարսիկ թագաւորը զբաղուած պիտի պահէր ութ տարի:

(4) Փաւստոս, Գ. 18: Խորենացի, Գ. 25:  
 (5) Փաւստոս, Գ. 59:  
 (6) Փաւստոս, Գ. 54:  
 (7) «Մամիկոնեանների քաղաքական դերն Արշակունեաց թագաւորութեան ժամանակ, ինչպէս շատ ուղիղ գիտել է Պրոֆ. Մարկուարդը, կարող է վերաբնութեան և նոր ու աւելի անալիտիկ քննադատման» (Յ. Մանանդեան, էջ 74):

Ուրիշ պարագայ մը, Կոստանդինոս Կայսեր տիրապետութեան սահմաններուն յանկարծական ընդարձակուիլն էր:

350 թուականի Փետրուարին Կոստանդինոսի կրտսեր եղբայրը Կոստաս սպանուեցաւ: Տաս տարուայ ընթացքին Մեծն Կոստանդինի երկու զաւակներուն սպանութիւնը, անոր միակ վերապրող որդին, Կոստանդինոսը, տէր պիտի գարձնէր բովանդակ Կայսրութեան, Առլանտանէն մինչև Միջագետք: Հետևաբար, Կոստանդինոս իր հրամանին տակ պիտի կրնար ունենալ աւելի մեծ բանակներ՝ քան երբ Շապուհի հետ կռուի կը բռնուէր:

Երբ Արշակ Թագաւորի զեռպանները Կոստանդինոս Կայսեր ներկայացան, 351ին, Հայ-Բիւզանդական բարեկամութեան դաշինք կնքելու համար, Կոստանդինոս այլևս միակ տէր տիրակալն էր Հռոմէական Կայսրութեան, հակառակ թագապահանջ բախտախնդիր զօրականներու կարծաւ ելոյթներուն:

Հայ զեռպանութեան զուլին էր ներսէս Կաթողիկոսը:

Կասկածամիտ Կոստանդինոս ինչպիտի յոռետես նկատուիներ ալ ունենար, հայ թագաւորին առաջարկը յօժարեալով պիտի ընդունէր, երբ հաշուի առնենք որ Բիւզանդական հեղինակութեան Հայաստանի մէջ պահպանումը՝ Կայսրերու արեւելեան քաղաքականութեան հիմնաքարն էր:

Կոստանդինոս մեծամեծ պատիւներ ըրաւ հայ պատգամաւորներուն: Թանկարժէք ճոխ նուէրներ իրենց և Արշակ Թագաւորին: Ան նաև վերագարձուց իր մօտ պատանդ զբռնըւող Արշակունի երկու իշխանները, Արշակին եղբորորդիները, Գնէլ և Տիրիդ<sup>(8)</sup>, Գնէլի պարագային, Կայսրը յիշեց թէ ինք որբացուցեր էր դժբախտ պատանին, սպանել տալով անոր հայրը՝ Տրդատ, ուստի որպէս բացառիկ պատիւ մը անոր, հիւպատոսութեան պատիւը շնորհեց<sup>(9)</sup>:

2. Օ Լ Ի Մ Ի Ը

Դաշինքը, զոր Թագաւոր և Կաթողիկոս անձնական յաղթանակ մը համարեցին,

բռնեք, ալ աւելի կ'ամրապնդուէր ամուսնական կապով մը:

Արշակ Թագաւոր այդ ատեն հազիւ քանհինգ տարեկան եղած պէտք էր ըլլաւ և զեռ ամուսին Ինքն էր որ իր զեռպաններու Կաթողիկոսի միջոցաւ փափաք յայանած էր ամուսնանալու Կայսերական կամ Բիւզանդական իշխանուհի մը հետ<sup>(10)</sup>:

Արշակ տառջին և վերջին քրիտոսեանց Արշակունի թագաւորն էր, որ այսպիսի բացառիկ քայլ մը պիտի առնէր: Սա թերևս կարելի է մեկնաբանել Արշակ Թագաւորի զէպի Բիւզանդիոն տաժած ջերմ կողմնակցութեան, որ յետ այսու Արշակի համար եղաւ հիմնական քաղաքականութիւն, և որ կը հաստատէ մամանակակից պատմիչը Ամմիանոս Մարկելինոս ակնարկելով Արշակին՝ «մեր յարատև և հաւատարիմ բարեկամը»<sup>(11)</sup>:

Կոստանդինոս Կայսրը Արշակին հարսընտրեց իր Կոստաս եղբոր նշանածը, Օլլիմբիա:

Կոստաս երբ սպանուեցաւ 350 Փետրուարին, 29 տարեկան կ'ըլլար: Տասնհինգ տարեկանին, իր հայրը, Մեծն Կոստանդին զինք նշանած էր փոքրիկ աղջկայ մը հետ, Արլարիոս իշխանի դուստր Օլլիմբիային:

Արլարիոս՝ մեծանուն Կայսրին սիրելի էր և անկէ՝ բարձր պատիւներու արժանացած: Փառասէր մէկը, որ թերևս կայսերական ծիրանին օր մը ստանալու զազանի տենջն իսկ փայտալոյս էր<sup>(12)</sup>:

Երբ Կոստանդինի մահէն վերջ Արլարիոսն ալ զոհ գնաց կազմակերպուած ջարդի մը, Կոստաս պահեց իր խոստումը, աղջիկը որ տաս տարեկան կար չկար, առաւ իր պաշտպանութեան տակ, անոր կրթութեան և ազրուստին հոգ տարաւ, այնպէս ինչպէս վայել է Հռոմէական Կայսրութեան ապագայ թագուհի մը: Երիտասարդ Կայսրը պիտի սպասէր մինչև որ Օլլիմբիան ամուսնանալու տարիքը հասնէր: Դեռ չամուսնացած, Կոստաս սպանուեցաւ:

Ահա այս զեռատի իշխանուհին էր որ Կայսրը կ'ընտրէր հայ երիտասարդ թագաւորին համար: Եւ աղջնակը որ կ'երազէր

(8) Փաւստոս, Գ. 5:

(9) Խորենացի, Գ. 21:

(10) Փաւստոս, Գ. 15:

(11) Ammianus, XXV, 7, 12.

(12) Eunapius, 385-91.

Հոսմէական կայսրուհի ըլլալ, հետաւոր  
Հայաստանի թագուհի կ'ըլլար:

Հետաքրքրական խորհրդածութիւնն Ար-  
լաբիոս իշխանի ազջիւր Արշակ թագաւորի  
կին կ'ըլլայ: Ասպիտն իշխանի ազջիւր ներ-  
սէս կաթողիկոսի կին: Բիւզանդական իշ-  
խանուհի մը Արշակունի հայ թագաւորի կին,  
Բիւզանդական իշխանուհի մը Արշակունի  
հայ կաթողիկոսի կին: Հայ արքունիքի վե-  
րագարթնած Բիւզանդասիրական հակում-  
ները հազիւ թէ աւելի ամուր հիմերու  
վրայ կոթնէին:

Հայաստան վերադառնալուն՝ ներսէս  
կաթողիկոս պիտի օրհնէր Արշակի և Օլիմ-  
բիայի պսակը: Ինչպէս տարի մը վերջ ալ,  
352ին, պիտի մկրտէր անոնց զաւակը Պապ(13):

Կրնանք երեւակայել թէ տարին անց-  
նելուն, Արշակ, նորածին արքայական ե-  
րախայի օրօրօցին վրայ հակած, երիտա-  
սարդ հօր մը ետուն հրճուանքով, հայերէն  
բառերը կ'մկրտով նոր սորվող Օլիմբիային  
խնդալով ըսած կրնար ըլլալ թէ, ահա ա-  
սիկ կայսեր հետ իր կնքած գաշինքին ա-  
ռաջին երջանիկ պտուղը, Պապ: Ար մը ան  
եզական քաջարի թագաւոր մը պիտի ըլ-  
լար, իր երակներուն մէջ հայու և հոսմա-  
յեցիի արիւնով: Ապրող խորհրդանշանը  
երկու քրիստոնեայ թագաւորութիւններու:  
Եւ երբ ան մեծնար, Հայաստանի հերոսա-  
կան Արքան, արդար վրէժխնդրութեամբ  
իր հոգին վառուած, պիտի պատժէր Սա-  
սանեանները՝ անոնց կատարած բոլոր չա-  
րիքներուն համար:

Չենք գիտեր թէ այս օտար իշխանու-  
հին ինչպիսի՞ք ընդունելութիւն գտաւ հայ  
աւագանիէն կամ հայ ժողովուրդէն, և  
ինքն ալ իր կարգին ի՞նչ վերաբերում  
ցոյց տուաւ անոնց հանդէպ:

Բիւզանդական կուսակցութեան նախա-  
բարները, ներսէս կաթողիկոս, և նոյնինքն  
Արշակ թագաւոր նկատած կրնային ըլլալ  
այս ամուսնութիւնը որպէս պետական բարձր  
չահերու թելադրած մէկ կարևոր քայլը:  
Իսկ անոնց հակառակորդները խիթիւ գիտած  
եղածը, յախուսն անխորհուրդ քայլ մը,

որ Շապուհ թագաւորը պիտի զրգուէր երի-  
տասարդ հայ Արքային դէմ:

Օլիմբիան, իր կարգին, չէր կրնար մոռ-  
նալ որ ինք Հոսմէական կայսրուհի մը պիտի  
ըլլար եթէ ոճրագործի մը սուրբ իր նշանած  
կայսրը կեանքէն չզրկէր: Ան Արշակը տե-  
սած իսկ չէր իր ամուսնութենէն առաջ՝  
Անձանօթ հայ լեզուի, երկրին և սովորու-  
թեանց, բացի այն որ Հառամայեցի և Յոյն  
զրոյդներ հայ ժողովուրդին ակնարկելուն  
բարբարոս կոչած էին զայն, ուստի, ինչ  
ալ ըլլար, ստորագոս համայնք մը լատին  
և յուն աշխարհին:

Օլիմբիան ալ գիտակցած ըլլալու էր  
թէ այս ամուսնութիւնը քաղաքական բնոյթ  
ունէր, և հոգ չէ թէ իր ամուսինը ինչ տե-  
սակ մէկն այ եղած ըլլար, ստիպուած էր  
համակերպիլ անհրապօր այս բախտին, իր  
հայրենիքի և կայսեր շահը նկատի ունե-  
նալով:

Ինչպէս առհասարակ կը պատահի նմա-  
նօրինակ ամուսնութիւններու պարագային,  
եթէ օտարազգի թագուհին իր երկրին ի  
նպաստ զաղտնի գործունէութեանց միջա-  
մուխ չըլլայ, գրեթէ առանձնացած ինք-  
նամփոփ կեանք մը կ'ապրի արքունիքին  
մէջ, ուր ամէնքը իրեն օտար են և ինքը  
ամենուն օտար: Արաքսի ափին, Պոլիսը  
կամ Հոմը կ'երազէ: Իսկ եթէ ջղագրգիւ  
բնաւորութեամբ մէկն է, իր զիրքը և կա-  
ցութիւնը կրնայ ծանրակշիւ անելի ենթար-  
կել: Ոչ միայն ընտանեկան պարագաներ  
կ'ազդեն իր վիճակին, այլ և ամուսնութեան  
միակ պատճառ պետական քաղաքականու-  
թեան փոփոխումը բախտորոշ անդրադար-  
ձում կրնայ ունենալ իր անձնական ճակա-  
տագրին վրայ:

Փաւստոս և Խորենացի կը գրեն թէ  
Արշակ թագաւոր չափազանց սիրեց իր թա-  
գուհին: Բայց Օլիմբիան հայ արքունիքի  
մէջ կղզիացած և զգուշաւոր կեանք մը  
ապրեցաւ(14): Բիւզանդական կղզեակ մը,  
որ չէր հանդուրժեր միջամտութեան:

Հպարտ Օլիմբիան չընտելացաւ հայ  
կեանքին, և երբ իր միակ զաւակը Պապ,  
զեռ պատանի, Հայաստանի թագաւոր կ'ըլ-  
լար, ինք հոն չէր: Կամ բնական մահով  
մեռած, և կամ ընդմիջաւ հեռացած օրար-  
բարոս միջավայրէն:

(13) Փաւստոս և Խորենացի կը գրեն թէ Փա-  
ւանձեմ ձեռնդ տուաւ Պապին: Tillemont ժամա-  
նակագրական տուեալներու վրայ հիմնուելով,  
կը փաստէ թէ Օլիմբիան էր Պապին ժայրը (Til-  
lemont, Vol. V. 701):

(14) Փաւստոս, Գ. 15:

3. ՆԵՐՔԻՆ ՊԱՅՔԱՐՆԵՐ

Արշակ Բ. և Պապ թագաւորներու օրով  
Հայաստանի քաղաքական ասպարէզի ամե-  
նաժողովեցուցիչ երեւոյթը կուսակցական  
պայքարի կատաղի թափն է:

Պարսկաստանի մէջ Սասանեաններու  
հաստատուելէն վերջն է որ հայ աւագանիի  
մէջ երևան կուգայ հսկայական շերտաւոր-  
ում. Պարսկական կուսակցութիւն և անոր  
ընդդիմադիր Բիւզանդական կուսակցու-  
թիւն:

Սասանեաններէն առաջ անհաւանական  
է նման երկու կուսակցութեանց գոյութիւնը  
Հայաստանի մէջ, որովհետեւ Պարսկաստանի  
տիրապետները Արշակունիներ էին, ինչպէս  
Հայաստանի: Արքայական մեծ մէկ ընտա-  
նիքի երկու ճիւղերը իրարու դէմ թշնա-  
մական ոչինչ կրնային ունենալ, մանաւանդ  
որ երկուքը մէկ Հումէական կայսրութիւնը  
կը նկատէին հասարակաց թշնամին:

Սասանեանները Պարսկաստանի մէջ Ար-  
շակունիները խորտակելէ վերջ, հետամուտ  
եղան այդ իրենց համար յոյժ ատելի ըն-  
տանիքը արմատախիլ ընել նաև մօտակայ  
գրացի երկիրներէն:

Պատերազմի կտրական միջոցը փորձե-  
ցին, բայց արդիւնքը անգոհացուցիչ եղաւ:  
Հայ ժողովուրդը և անոր առաջնորդներուն  
մեծամասնութիւնը, իրենց աչքին այլևս  
զարաւոր նուիրականութիւն ստացած Ար-  
շակունի ընտանիքէն չբաժնուեցան:

Քրիստոնէութեան պետականացումը  
Հայաստանի մէջ ա՛յլ աւելի խորացուց վիճը  
Սասանեան և Արշակունի ընտանիքներու մէջ:

Այլևս Սասանեան թագաւորներ տեն-  
դագին աշխատանքի լծուեցան հայ նախա-  
րարներէն կողմնակիցներ ճարելու: Առաջին  
կարգին ա՛յն նախարարութիւններէն որոնց  
քնազաւառները Պարսկաստանի սահմանա-  
կից էին կամ հարեան: Նշանաւորները,  
Արծրունի և Սիւնի իշխանութիւնները:

Սակայն, սխալ եզրակացութիւն պիտի  
ըլլար՝ հետեցնել թէ այս նախարարութիւն-  
ները որպէս անշեղ քաղաքականութիւն  
որդեգրած ըլլան պարսկական տեսակէտ,  
որուն ամէն պարագայի տակ և ամէն գնով  
հաւատարիմ կը մնան: Ինչպէս ալ նոյնքան  
մակերեսային զճիւղ մը կ'ըլլայ ըսել թէ  
Մամիկոնեանները առաւելապէս Բիւզան-

դական քաղաքականութիւն մշակեցին, ու-  
րովհետեւ իրենց զաւառները մօտ էին  
Բիւզանդական հողամասերուն:

Աշխարհագրական կամ կալուածային  
հանգամանքներու համահաւասար, և եր-  
բեմն աւելի, գործօն մ'է նախարարի ան-  
հատականութիւնը, իր քնաւորութեամբ,  
նախասիրութիւններով, քէնով, ատելու-  
թեամբ կամ փառասէր տենչերով, այն  
աստիճան, որ բոլորովին հակոտնեայ տե-  
սակէտ կը ջատագոյնէ:

Այս յոյժ գարմանալի երեւոյթը -  
չըսելու համար անիմանալի - մասնաւորա-  
բար ճիշդ է Արշակ և Պապ թագաւորներու  
իշխանութեան շրջանի կուսակցական պայ-  
քարին:

Այսպէս, օրինակ, մինչ Անդովկ Սիւնի  
մեծ իշխանը կը զանկէք Արշակի հետ միա-  
սին, Բիւզանդական կուսակցութեան առա-  
ջաւոր շարքերուն, Վաղինակ Սիւնիին՝ Շա-  
պուհի վտտահելի բարեկամն է: Մամիկոն-  
եան երեք եղբայրներէն՝ Վասակը, Արշակ  
թագաւորի սպարապետը, անհաշտ թշնամի  
Պարսկաստանի, մինչդեռ իր երէց եղբայրը,  
տոհմին նահապետը, Վարդան, Շապուհի  
խորհրդակից. իսկ կրտսեր եղբայրը Վահան,  
բոլորովին նուիրուած Շապուհին, ինչպէս  
յիտոյ կը տեսնենք:

Անձնական տեսակէտներ նոյնիսկ Ար-  
շակունի իշխանագուն մը, Արշակ թագա-  
ւորի եղբորորդին Տիրիթը հակաբիւզանդա-  
կան կ'ընեն, և ան կը գործակցի Մամիկոն-  
եան տոհմապետին<sup>(15)</sup>: Կրնանք ենթադրել  
թէ Տիրիթը, որ կոստանդիոս կայսեր ձեռքը  
պատանդ էր և անոր հրամանով իր Տրդատ  
հօրեղբոր սպանումը տեսած, շատ ալ հա-  
մակրութիւն չուենեար Բիւզանդականե-  
րուն:

Այս երկու կուսակցութեանց գործու-  
նէութեան զուգընթաց, ուրիշ պայքար  
մ'ալ սկսած էր փոթորիկի հայ քաղաքական  
ներքին ճակատը: Այդ սկիզբ առած էր Տի-  
րան թագաւորէն, բայց անոր որդւոյն Ար-  
շակի, և յիտոյ Պապի օրերուն սասակացաւ  
այն աստիճան որ արքայական սուրը հայ  
ազնուական արիւն թափեց առատօրէն:

Շարունակելէ (10) ՀՐԱՆԴ Գ. ԱՐՄԷՆ

(15) Փաւստոս, Գ. 17, Խորենացի, Գ. 25:

**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**

**(ԽԵԻ) ՅՈՎ, ՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՅԻ**

= 19 =

Առաջին փոփոխակ

**ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՄԱՀՈՒԱՆ**

Ա.

Քանի դատիս ի հետ մեղաց, է անըզգամ մարդ կատաղած  
Զանչափ չարիբդ որ գործեցիր, հերիք արայ դարձիր մեղաց :

Բ.

Ի Աղամայ մինչեւ այսօր շունչ կենդանի զոք չէ թողած,  
Գիտեմ չսես խրատու զբրոց, մեղաւորաց թ'ինչ կայ պահած :

Գ.

Ով որ ունէր բերդ ու քաղաք, դարպասանի ոսկով ձեւիւած,  
Յետոյ եթող զամէն անտէր, ներքեւ հողուն է պառըկած :

Դ.

Ով որ խըմէր զանուշ զինին, զինքըն բրտէր բան զխող ուռած,  
Տեսայ ըզնայ խիստ առելի, չանուշահոտ գէշ մի ձըզած :

Ե.

Ով որ հեծնոյր ձի բարձրավիզ, ու թուր քաշէր ամէն դիհաց,  
Տեսայ ըզնայ խիստ փոշման, երկու փայտի մէջ պառըկած :

Զ.

Շատ աղջկունք, կին զեղեցիկ, ծամն ու վարսերն էր աւրինած,  
Նորայ ունին պայծառ հանդերձ, գէտ զարեգակն են բոլորած :

Է.

Ճաւեհին ւ ոլոր առնեն կամաց, լինին ամէն մարդոյ սիրած,  
Ի մահուն արն են առելի, գէշ ու զազիր են տեսողաց :

Բնագիր Ա. էջ 23, Հմմտ. Գ. էջ 306, հողուն է նա պառկած, ՍՏ:  
 Մ. էջ 266, Տ. էջ 44, Գ. — 2. — ձըզած — դարձած, Տ:  
 Վերնագիր, Ս. էջ 266, Ե. — 2. — . . . մէջնը պառկած, Գ.  
 Ա. — 1. — . . . կատարած, Ա:  
 Բ. — 1. — այսօր — ի քեզ, Ա:  
 Գ. — 1. — ունի, Տ . . . դարպասընի,  
 Գ. — 1. — առնին, Ա:  
 Ա. դարպասնի, Գ. դարպաս ունի, Տ. —  
 2 — . . . հողին ի կան պառկած, Գ. . .  
 մէջ էր պառկած, ՍՏ:  
 Զ. — 1. — վատ . . . որ ծամն ու  
 վարսն են յօրինած, Տ. — 2 — զերթ, Գ.  
 Է. — 1. — առնին, Ա.

Ը.

Քրիստոս նստի աթոռ փառաց, հատուցանէ վարձ սիրողաց,  
Արդարոցքն տայ պրսակ, մեղաւորացն ապաշխարած:

Թ.

Խեւ Յովանէս Քուլկուրանցի, սրտի մըտօք զականջրդ բաց,  
Աստէնս արայ բեզ ճար շուտով, անդէն առնուս պրսակ փառաց:

= 19 =

Երկրորդ փոփոխակ

Բ Ա Ն Պ Ի Տ Ա Ն Ի . — 4

Ա.

Քանի դատիս ի հետ մեղաց, է անզգամ մարդ կատարած,  
զանչափ չարիքդ որ գործեցիր, հերիք արայ դարձ ի մեղաց:

Բ.

Տես ու լսէ խրատու գրոց, մեղաւորացն ինչ կա պահած,  
արդարոցն արբայութիւն, փառք ու պատիւ յորդայխաղաց:

Գ.

Բեր ու ձրզէ զաճն ի մըտիդ, դու էլ զիտես ինչ կա պահած,  
յԱղամայ մինչեւ այսօր, շունչ կենդանի գոր չէ թողած:

Դ.

Էտ որ ունէր բերդ ու քաղաք, դարպաս ունէր ոսկով ձեւած,  
նայ մընացեր ամէն թերմաշ, ինքն է իջեր գուբ մի փորած:

Ե.

Էտ որ հեծնէր ձի բարձրավիզ, ու թուր ածէր ամէն դիմաց,  
յետոյ եղև խիստ փոշիման, յերկու փետի մէջ պառիկլած:

Զ.

Էտ որ խըմէր զանուշ զինին, զինքն բըտէր բան զխոզ ուռած,  
նա եղև խիստ ատելի, զինչ անպիտան զէշ մի ձրզած:

Է.

Շատ մի կտրիճ մուրայգալի, կամ թէ լինէր մուրուքն էկած,  
տեսայ զէն գեղեցիկ սուրաթն, ի հետ հողուն էր շաղըղած:

Ը.

Շատ աղջրներ գեղեցկածամ, ուրնց վարսերն օրինած,  
հագնին հանդերձ ոսկի թելով, զինչ զարեգակն բոլորած:

Ը. — 2. — ... և ապաշխարող մեղա-  
ւորաց, ՍՏ:

Թ. — 1. — Խեւ — է՛, ՍՏ:

Բնագիր, Գ. էջ 137: Տես Սիոն, 1952,  
էջ 268:

թ.

Տես թ'ինչ եղան յանկարծակի, անտաշ 'ւ անկոփ փայտ մի ձրգած,  
ուրենց մահուն օրն առելի, ուրենքն ամէն սրտի սիրած:

ժ.

Դեռ այդ յետին համարն չի, յետին համարն է կատարած,  
յորժամ ծագի խաչն ի յերկնից, նստի Քրիստոս յաթոռ փառաց:

ժԱ.

Արդարոցն տայ պսակ, որ հրգնեցան կացին ի լաց,  
մեղաւորացն զհուրն անշէջ, ըզտարտարոս գուրն որդանց:

ժԲ.

Խեւ Յովանէս Քլզուրանցի, զհոգոյ մըտաց աչերըդ բաց,  
ուղիդ սրտով խոստովանիր, 'ւ ապաշխարէ եւ կաց ի լաց:

= 20 =

Վ Ա Ս Ն Ս Ո Ւ Տ Ս Ի Ր Ե Լ Ե Ա Ց . — 5

Ա.

Իմ սիրտ, լսէ ւ ականջ արա, որ սիրելի իսկի չըկայ,  
Ոչ զըրացի եւ ոչ եղբայր, ոչ միակեց, ոչ բահանայ:

Բ.

Այս ժամանակըս հանց երեր, ով որ չգիտէր թող գիտենայ,  
Զով որ գիտես խիստ սիրելի, հուրն ի բերնէն ի դուրս կու գայ:

Գ.

Թէպէտ շինես շատ սիրելի, մի' հաւատար սրտովդ ի նա,  
Յամէն զեհաց փորձէ եւ տես, ապա թէ զքո խորհուրդն ասայ:

Դ.

Շատ մարդ յերեսդ է քաղցրախօս, ի սիրտըն բոց կու բորբոքայ,  
Սեզնի լինի սուտ սիրելի, ւ ի փորձութեանց ժամն ուրանայ:

Ե.

Քանի ողջ ես ըզբեզ պահէ, զըլխուդ ւ անծինըդ պէտ արայ,  
Եթէ հաքիմի կարիք լինիս, կեանքդ քան ըզհով անցնի զնայ:

Զ.

Ի հետ անգէտ չար սիրելուն ով երկու խօսք առնու եւ տայ,  
Նա ականջովն հանց բան լըսէ, որ միտ դընէ եւ զարմանայ:

Բնագիր, Գ. էջ 138, Հմմտ. Տ. էջ 42.      Ե. — 1. — զըլխու, Տ: — 2 — հա-  
առնուած 1697 թվ. ձեռագիր Տաղարանէ մը, քիմ կարի, Տ: գնայ — ւ երթայ, Տ:  
Գ. — 2. — . . . ապա զխորհուրդն      Զ. — 1. — չար — սուտ, Տ: — 2 —  
ասա նորա, Տ:      չէնց, Գ:  
Դ. — 1. — բոց — հուր, Տ:

է.

Իշխանաց քաջ զինաւորն յերակ սրտնեղ տրտում կենայ,  
Գայ մօտ ի քեզ նստի հրեշտակ, ելնէ զընայ չար սատանայ:

Ը.

Դու պահէ զսէրքն կանգուն, սիրտըդ սիրով թող լինենայ,  
Ատելութեան տեղիք մի՛ տար, որ բարութիւն երթայ մընայ:

Թ.

Խեւ Յովանէս Թլգուրանցի, աղուոր պահէ զմիտըդ ի վերայ,  
Մարդասէրն է աստուածասէր, եղբայրատեացն է սատանայ:

= 21 =

## Խ Ր Ա Տ Պ Ի Տ Ա Ն Ի . — 6

Ա.

Մեղաւոր եմ, մեղաւոր, ես ինձ անծամբս վրկայեմ,  
Համարիմ թ'այլ մարդ չասէ, զեմ ես գիտեմ զինչ գործեր եմ:

Բ.

Իմ չարերն եմ սերմաներ, հաւսայ յաստենիս կու հնձեմ,  
Մեռանիմ 'ւ անցնիմ զընամ, զայլն ի գեհեանըն վըճարեմ:

Գ.

Լուսատուն ինձ լոյս երևտ, որ զվատն ու զլուրն փանաչեմ,  
Ես ի յարատն կու հայիմ, 'ւ ի յարննէ լացն եկեր եմ:

Դ.

[Բ]ո ձեռացդ եմ ձեռագործ, ձեռն կու տաս որ վաստակեմ,  
Նա կու խըլեմ, զրկեմ, զողանամ, առնում չտամ ու հարկանեմ:

Ե.

[Ո]տքս անցեր է առջեւ յերակ, որ հանապազ ցոխ կու [ք]էլեմ,  
Սյն ճանապարհն որ չէ բարի, յաւժար կ'երթամ զիս ցուցընեմ:

Զ.

Քո տեսուդ արժան արայ, թէպէտ որ ես արժանի չեմ,  
Մի զքեկեալս կոտրեր, ես ի վաղուց ծունկս անկեալ եմ:

Է.

Զիմ սիրուն ընկերակիցն զաւրն կենամ ու բամբասեմ,  
Նայ այնաւք յամէն դիմաց, ձեռնկոտոր անյաջող եմ:

Ը.

Խեւ Յովանէս Թլգուրանցիս ցանկամ որ զքեզ Տէր տեսանեմ,  
Թէ հազար եմ մեղաւոր, դու ողորմած ես կու զիտեմ:

(7)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

է. — 1. — Յիշխանաց քաջ *և*, *Տ*: սրտնեղ — որ տեղն, *Տ*:

թ. — 2. — է, չունի Դ:

Բնագիր, Դ. էջ 139: Տես Սիոն, 1953, էջ 81:

**ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**Մ Ի Ջ Լ Ա Դ Ա Ր Ե Ա Ն Հ Ա Յ Կ Ո Մ Պ Ո Ջ Ի Տ ՈՐ Ն Ե Ր**

Շարականների որոշ մասը գրուած են արձակ կամ չարձակ արձակ: Կան շարականներ էլ, որոնք բանաստեղծական և գեղարուեստական ուրոյն արժէք են ներկայացնում: Դրանք մեծ մասամբ անկեղծ և ջերմ զգացմունքներով տողորուած և զունագեղ պատկերներով վրձնուած սրբապատկերներ են, որոնց հեղինակները, գծրախտարար, մեծ մասամբ յայտնի չեն:

Նշենք և այն, որ մեզանում շարականների հին ընտիր եղանակները ձայնագրելու և ընդմիջա կորստից փրկելու առաջին փորձը կատարել է երաժշտագէտ Բարաշադրուած Լիւննջեանը: Նոյնպէս նրան ենք պարտական, որ հնարել է ձայնանիշերը և շարականները ձայնագրել է մինչև սԱյսօր յարեաւոր: Այնուհետև շարականները ձայնագրելու աշխատանքին նուիրուել են նախ՝ երաժիշտ Եղիա Տնտեսեանը, ապա՝ Արմաշի Դպրեմանքի երաժշտութեան դաստաւ Համբարձում Չէրչեանը:

1874 թուին, հայոց եկեղեցական երաժշտական արուեստը մի նոր շրջան է թեւակոխում, երբ Գէորգ Գ. Կաթողիկոսի հրամանով Պոսից Էջմիածին է հրաւիրուած երաժշտագէտ Նիկողայոս Թաճեանը ձայնագրում է ժամադրքը և շարականները, որոնք տպագրուած են և հարստացնում երաժշտական գրականութեան էջերը:

Այնուհետև հայոց եկեղեցական երաժշտութիւնն անում է մի նոր ուշադրուածուածում, երբ ընդունում է Եւրոպական երաժշտական ձայնանիշերի գործածութիւնը: Տաղանդաւոր երաժշտագէտ Մակար Նիմալեանն առաջինն է հանդիսանում, որ հայկական պատարագը ձայնագրում է Եւրոպական ձայնանիշերով: Այդ հայկապարուեստն է որ այսօր ամենից շատ երգուած է հայոց եկեղեցիներում՝ զաշնամուրի կամ երգհանի նուագածութեամբ:

Եկեղեցականից յետոյ, անզուգական կուրսուտին ենք պարտական, որ Եւրոպական ձայնանիշերով ձայնագրում է հայկական

պատարագը և հայ ժողովրդին նուիրում հողեւոր արուեստի մի գեղեցիկ յաշարձան: Երրորդ փորձը կատարում է երաժշտագէտ Գէորգ Չ. Կաթ. Չորէքչեանը, որ զեռմուտ է անտիպ:

Շարականներից յետոյ առանձնապէս նաև գանձեր: Դրանք այն հողեւոր բանաստեղծութիւններն են, որոնք իրենց բովանդակութեամբ արտայայտում են մաղթանք, խնդրուածք կամ ներբողում են քրիստոնէութիւնը տարածող գրոշակիրներին: Այդ երգերում տեսնում էք նաև կրօնական որևէ նշանաւոր տօնի պատկերը: Առհասարակ, Գանձերն իրենց ընդլիճով յանգուոր, պատմական և սեղմ բովանդակութեամբ հիւսուած երգեր են(\*), որոնց հաւաքածուները կոչուած են Գանձաբան. զրանցից ամենահին մի օրինակը մինչև օրս առանձին խնամքով պահուած է Վենետիկի - Ս. Ղազարի Մխիթարեան Միաբանութեան վանքի մատենադարանում: Դա մէկն է 1371 թուականին գրուած այն հազուադրուած գանձարանից, որ իր բովանդակութեամբ պատմում է 14րդ դարի կրօնական բանաստեղծութեան հիմնական գծերի մասին:

Առանձնապէս նկարենք նաև 10րդ դարի ամենանշանաւոր մատենագիր, օճարկնի հոշակաւոր հեղինակ՝ Գրիգոր Նարեկացու գանձերը, որոնք իրենց արուեստով ժողովրդական գրուած ունեն և ցայտուն զաղափար են տալիս նրա զգացմունքի խորութեան և բանաստեղծական արուեստի վեհութեան մասին:

Հնագոյն ձեռագրերի զարդն են կազմում, գանձերից յետոյ, կրօնական բանաստեղծութեան այլ տեսակները, որոնք նոյնպէս երգուած են եկեղեցուում: Դրանք տաղերը, մեղեդիներն ու եղիցիներն են, որոնց մէջ տեսնում ենք հայ ժողովրդի կրօնական ջերմ զգացումները, վառ յոյս:

(\*) Չէտք չէ մտանալ, որ երգ նշանակութեամբ էր գործածուած կրիկեան շրջանում գանձ բառը:

զերը և հոգեկան անկեղծ ապրումները, որոնք արտայայտուած են բանաստեղծական նրբութեամբ: Ահա այդ գանձերը, տաղերը, մեղեդիները և եղիցիները կազմում են 12-15 Գարաշըմանի հայ երաժիշտների ստեղծագործութեան գլխաւոր ժանրերը: Դրանք ժամանակի հրամայողական պահանջն էին: Հայ կոմպոզիտորներն իր ժամանակին ձայնագրել են բանաստեղծական այդ գեղեցկութիւնները և հետագայ սերունդներին ժառանգութիւն թողել հայ արուեստի այդ թանկարժէք արտադրութիւնները:

Երաժշտական տեսակէտից այդ ձայնագրութիւնները ո՛չ միայն հետաքրքրական են, այլև իրենց կառուցուածքով, եղանակների գունագեղութեամբ ու ոճով առանձին արժէք են ներկայացնում: Աւելին: Հայ եկեղեցական երաժշտութեան արուեստի մէջ այդ երգերից շատերն ուշագրաւ են նրանով, որ արտայայտուած են նուրբ արուեստով և իրենց ինքնուրոյն ոճով գուտ հայկական, հարազատ դրոշմ ունին: Այդ տեսակէտից հարուստ նիւթ են մատակարարում հայ երաժշտութեան ապագայ զարգացման և երաժշտական այլ ստեղծագործութիւնների, ինչպէս օպերաների և սիմֆոնիաների համար:

Կայ մի այլ կարևոր հանգամանք: Անվիճելի է որ հայ եկեղեցական երաժշտութիւնը, մանաւանդ շարականների եղանակները, որքան էլ կրում են հայ հեթանոսական երգերի, ինչպէս և հետագայում նաև յունական կամ ասորական եկեղեցական եղանակների ազդեցութիւնը և կամ արաբական երաժշտութեան ազօտ դրոշմը, այնուամենայնիւ նոյնքան եկեղեցական երգերի, գլխաւորապէս գանձերի, տաղերի, մեղեդիների<sup>(\*)</sup> եղանակները առաւելապէս, եթէ ոչ բացառապէս, հայկական են: Կան և շարականներ, որոնք կառուցուած են ժողովրդական եղանակների սիմֆոնի, նրբութեամբ և երանգաւորութեամբով:

Այս մասին Յարութիւն Գ. Շալեանը «Հայաստանի կոչնակ»ում իր ստորագրած

(\*) Նշենք որ ձեռագիր ձայնագրուած ժամագրքերի մէջ մեղեդիներն ու եղիցիները կազմուած են երաժշտական խաղերով և լուսանցքներում գրուած են այլևայլ եղանակների անունները, ութը ձայնի բաժանմունքով:

«Հայ եկեղեցւոյ շարականներն ու երգերը խորագրով նիւթում ընդգծել է հետեւեալ բնորոշող տողերը. «Անվիճելի է սա իրազութիւնը՝ սակայն՝ թէ հինգերորդէն մինչև տասներեքերորդ դարերու ժամանակամիջոցին մեր շարականներուն, մեր եկեղեցական երգերու եղանակներուն մէջ շատ աւելի հայկական դրոշմ, հայկական հարազատութիւն կար չնորհիւ մեր քաղաքական, մշակութային անկախութեան՝ քան անկէ վերջ մեզի ասանդ թողուած երաժշտութեան մէջ»:

Ահա թէ ինչու այդ ստեղծագործութիւնների մէջ խորասուզուող մասնագետ արուեստագէտը գտնում է ո՛չ միայն միջնադարեան հայ երաժշտութեան հարստութեան պատկերը, այլև ծանօթանում է կոմպոզիտորական տէխնիկայի և այն անհրաժեշտ ձևերի ու կառուցուածքի հետ, որոնք կազմում են հայկական հնագոյն երաժշտութեան էական և առանձնայատուկ գծերը:

Պիտի արձանագրել նաև մի այլ հանգամանք, որ եթէ հայ շարականների եղանակները կերտուած են իւզանդացիներից փոխ առնուած եկեղեցական ութ արմատական ձայնների վրայ, ապա գանձերը, մեղեդիներն ու տաղերն առաւելագոյն չափով յորինուած են ինքնուրոյն մօտիւններով: Նրանք խորապէս կապուած են հայկական ժողովրդական երաժշտութեան և դրա գեղարուեստական արտայայտութեան հետ: Նրանց ակունքը հանդիսանում են հայ ժողովրդական աշխարհիկ երգերը:

Հայ հոգևոր երաժշտութեան մեղուիկ գիծը բանաստեղծական խօսքի հետ այնքան ներդաշնակ է հիւուած, որ դժուար է որևէ սահման դնել նրանց միջև: Այս եղանակները շատ յստակ ու զեղեցիկ արտայայտում են երգերի բովանդակութիւնն ու տրամադրութիւնը, միաժամանակ ցայտուն կերպով դրսևորում հայ ժողովրդական քնարական ստեղծագործութեան բարձրարուեստ կառուցուածքը:

Այս երգերի մէջ շարագրման ձևերը, նրանց հարմոնիկ հնչիւնները, գոյները, զարդախաղերը, չափերը, շեշտերը կազմում են մի ներդաշնակ ամբողջութիւն և ցուցադրում միջնադարեան հայ կոմպոզիտորների ստեղծագործական բարձր տաղանդը:

նշենք և այն, որ այդ երգերի կոմպոզիցիայի հարմոնիան պահպանում է հայկական եկեղեցական երաժշտութեան ողջ գունազեղութիւնը: Գրանք իրենց բնոյթով համակում են լսողին անբացատրելի թախիծով ու վշտով: Գանձերը, տաղերն ու մեղեդիները զարեր շարունակ պահպանել են իրենց արուեստի թարմութիւնն ու թովջութիւնը:

Սակայն, ովքե՞ր են միջնադարեան հայ եկեղեցական երաժշտութեան լաւագոյն ներկայացուցիչները:

Հայ գրականութեան և արուեստի պատմութեան յայտնի են այդ սակաւաթիւ ներկայացուցիչների անունները, բայց մինչև օրս էլ մանրամասնորէն չեն լուսարանուած նրանց գործունէութեան ու կեանքի հիմնական գծերը, իսկ շատերն էլ դեռ ևս մնում են անյայտութեան մէջ:

Հայ հնագոյն երաժշտութեան այդ սակաւաթիւ արուեստագէտների անունները մի մասն երաժշտագէտ Սպիրիդոն Մելիքեանն իր «Աւրուազիւմ Հայ Երաժշտութեան Պատմութեան» խորագրով գրքոյկում նկարել է այսպէս. «Թէ՛ աւանդութիւնը և թէ՛ մատենագիրները բազմաթիւ անուններ են թուով իրրև հեղինակ մեր եկեղեցական երաժշտութեան, ամենից առաջ Սահակ և Մեսրոպ, որոնց՝ իրրև հայ դպրութեան հիմնադիրների, աւելի շատ բան են վերագրում, քան իրօք կարող էր լինել. Մովսէս Բերթոզ, Ստեփանոս Սիւնեցի, Յովհան Մանդակունի, Կոմիտաս Կաթողիկոս, Սահակ Զորափորեցի, Օհան Օձնեցի, Պետրոս Գետադարձ, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Վկայասէր, Ներսէս Շնորհալի (12րդ դար), որի օրով վանական տաղաչափութիւնն է մտնում մեր հոգևոր բանաստեղծութեան մէջ, Ներսէս Լամբրոնացի, Գր. Սկևռացի, Սալաւորուր Տարօնեցի, Յակոբ Կլայեցի և ուրիշները»<sup>(\*)</sup>:

Հնագոյն շրջանի վաստակաւոր երաժշտագէտների անունները պատկերող վաւերաթուղթն այնուհետև աւելի հարստացրել է Գարեգին Կաթ. Յովսէփեանը: Իր «Այլից կամ Գեղարդայ Վանք» խորագրով նիւթում նա գրել է հետևեալը. «13րդ դար»

ում արեւելեան Հայաստանում ծագել է սկսում հոգևոր երգերի, տաղերի և գանձերի գրականութիւնը. Վարդան (ո՛չ Բարձրբերդցի, ինչպէս կարծում է Ամատունին), Մխիթար Այրիվանեցի, Սալաւորուր Կեչառեցի, Մկրտիչ, Յովհաննէս Երզնկացի, Կիրակոս Երզնկացի, ևն. ձգում են այդ գանձանակին մէջ իրենց արժէքաւոր և անարժէք լուսաները. Յովհաննէս Գառնեցին ևս իւր բաժինն ունի այդտեղ: Տարաբախտաբար մեր գրականութեան այդ մասը հարկաւոր ուշադրութեան չէ արժանացած և տակաւին մթութեան մէջ է . . . «Յիսուս միաժինս սկսուած քով շարականի տնազուլս տաւերն են «Յովհաննէս Գառնեցի»:

Նշանակալից է և այն, որ միջնադարի լաւագոյն երաժշտագէտներից ոմանք՝ Գրիգոր Մերենցը, Սալաւորուր Կեչառեցին, Սալաւորուր Տարօնեցին, Յովհաննէս Պուլըր և ուրիշներ, իրենց կերտած երաժշտական գանձերի, մեղեդիների և այլ եղանակների նոր ձևաւորումներով, խազերի զիւտով և մանր ուսմունքների տարածումով հայ երաժշտական արուեստը հասցրել են կատարելութեան:

Ինորոշ է և այն, որ միջնադարի վարպետ երաժշտագէտներից շատերը կոչուել են նաև փիլիսոփայ: Այդ հանգամանքը հաստատում են Ներսէս Շնորհալու հետևեալ տողերը. «ունիւք սովորութիւն փիլիսոփայ սանլ, որ երաժշտական արուեստի կատարեալք են»:

Այժմ ժամանակագրական կարգով զըձենք հնագոյն ձեռագրերից մեր ուսումնասիրած մի շարք փայլուն երաժշտագէտների սեղմ պատկերը, որոնք հայ հնագոյն երաժշտական արուեստի սրտումների, ձեռակերպումների և զարգացման խնդրում ուշադրաւ և նշանակալից դեր են կատարել:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Ծարուակելի՛ 2)



(\*) Տե՛ս նաև մեր յօդուածը «Էջմիածին» ամսագրում, 1946 թ.:

**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

**Ա. — ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐ ՅԱՍԱՆԱ**

Կիլիկիոյ հայկական իշխանութեան շրջանէն, Ատանայի մէջ գործող սակաւթիւ գրիչներ միայն ծանօթ են մեզի, ինչպէս ժ.Գ. զարուն ապրող Ստեփանոս Գրիչը և Կոստանդին Քահանան: Յաջորդ երեք դարերը գրեթէ բոլորովին ամուլ են: Բայց ժ.Գ. զարուն երևան եկող ընդհանուր մշակութային շարժման մէջ Ատանան ալ կ'ընծայէ մեզի վեցեակ մը գրական աշխատութիւններ, որոնք առաւելապէս ծրարական մատենաներու ընդօրինակութիւններ կատարած են: Հետեւեալ զարէն ալ ունինք մէկ երկու գրիչներ:

Մեր այս յօդուածը անշուշտ մասնակի պատկեր մը միայն կը ներկայացնէ և կըրնայ ծագայիլ թելադրելու աւելի ամբողջական աշխատանք մը:

Ա. — Ստեփաննոս Գրիչ. — Ատանայի մէջ, 1244ին, բուրբ գրով օրինակած է Ամբաս Գունդստապլի համար.

1. — Յաղագս Բնութեան, Գրիգոր Նիւսացիի. — Յիշատակարանք Ձեռագրաց, Գարեգին Կթղ., Անթրիւսոս, 1951, էջ 451, 953, 957.

2. — Ստորգուրիւնք, Արիստոտէլի, նախորդին հետ մէկ տուփի մէջ:

Բ. — Կոստանդին Քահանայ, մականունն Քուռար, 1284ին, Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցիին հովանիին ներքեւ, օրինակած է Ս. Ներսէս Շնորհալիի Գրուրիւնները, խոշոր բուրբ գրով, Կոստանդին Կր. Օշինի համար. — Աճառեան, Յուլիան Զեռ. Թարգիզի, Վիեննա, 1910, էջ 14:

Կ'արժէ յիշել այստեղ Ոսկեհեր Քահանան, որ կը ստանայ Եսայի Մարգարէի գիրքը նշանաւոր գրիչ Ստեփանոս Գոյներերիցանցի օրինակութեամբ և Պօղոս Առաքեալի Թուղթերը՝ Պետրոս Քահանայի զբնութեամբ, 1297ին, Ս. Վազարի Տանաբին համար, զոր ինքը կանգնել տուած էր Ատանայի մէջ. — Յուլիան Զեռ. Ս. Յակոբեանց, Գ. Հատար, էջ 276-8:

Գ. — Գրիգոր Երէց, 1605ին օրինակած է Հաւաքածոյ մը, բուրբ գրով, Կիլիկիոյ Յովհաննէս Գ. Անթէպցի Կաթողիկոսին համար. — Սյուն, 1932, էջ 120:

Դ. — Մանուկ Գրիչ, 1610ին օրինակած է Ձեռնարուրեան Մաշտոցի մը, Ս. Ստեփանոս Եկեղեցիին հովանիին տակ. — Կիլիկիոյ, Անթրիւսոս, 1939, էջ 224:

Ե. — Արքանամ Երէց, 1639ին օրինակած է Շարակնոց մը, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս Եկեղեցիներու հովանիին տակ, Կիլիկիոյ Սիմէոն Բ. Աբրահամացի Կաթողիկոսին պատուէրով. — Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 309:

Զ. — Սահակ Գրիչ, որդի Թորոսի և Հեղինէի, եղբայր Ղազարի, Կիրակոսի և Իշխանի. օրինակած է Ատանայի մէջ, Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս Եկեղեցիներու հովանիին տակ,

1. — Շարակն, բուրբ գրով, 1659ին, երբ տակաւին զպիր էր. — Սիւրմէեան Արտաւազդ Արքեպոս., Յուլիան Զեռ. Հաւաք, Բ. Հատար, 1936, Հաւաք, էջ 149:

2. — Մաշտոց, 1671ին, իր քահանայութեան շրջանին, զարձեալ բուրբգիր. — Նոյն, էջ 80:

Այստեղ կ'աւելցնենք նաև ժողովածոյ մը, օրինակուած 1679ին, Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցիին հովանիին ներքեւ, նոր գրով, որուն գրիչը կը Ֆեայ այս. — Յուլիան Զեռագրաց Ս. Յակոբեանց, Գ. Հատար, էջ 121, թիւ 425, (մատուցի տակ):

Է. — Իսկէնտէր Դպիր, Կազմող, որդի Պօղոսի և Խանըմի, Ատանայի մէջ, 1694ին նորոգած է ձաւոց մը. — Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 303:

Ը. — Յարութիւն Գրիչ, 1727ին օրինակած է Քարոզգիրք, Ձմբան Հատար, Գր. Տաթևացիի, Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցիին, բուրբ գրով. — Սիւրմէեան, Յուլիան Զեռ. Երուսաղէմի, Ա. Հատար, Վենետիկ, 1948, էջ 245:

Թ. — Սարգիս Գրիչ, օրինակած է 1737-51 թուականներուն, Տրոպոպոլի մէջ (= Ատանա), Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս Եկեղեցիներու հովանիին տակ, Մեկ-

Յուրիւն երգոց երգոյն, Գր. Նարեկացիի — Պատմ. Կիթղ. Կրկրկրոյ, էջ 498:

Բ. — ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐ Ի ԲԱՆՈՒ

Բալու քաղաքի և շրջականերուն մէջ գործած են շատ մը գրիչներ, ժե-ժէ: զարերուն, ընդհանրապէս օրինակելով ծի-սական մատենաներ, ինչպէս՝ Աւետարան, ձառնար, Մաշտոց: Մեղի ծանօթ են հե-տեւեալ գրիչները, զորս կը ներկայացնենք ժամանակագրական կարգով:

Ա. — Աւետիք Արեղայ, որդի Ատոմայ, 1436ին, Բալուի Ս. Գէորգ Վանքին մէջ օրինակած է Աւետարան մը, ոսկերիչ Յովհաննէսի գուտար՝ Ահլի մելիք խաթունի յանձնարարութեամբ, ի վերատեսչութեան Տէր Մինաս Եպիսկոպոսի. օր դառն և ի նեղ ժամանակի զոր մահտարածամե յիս-տուծոյ շտայր թոյլ քահանայիցն հաց ուտելոյ: — F. C. Conybeare, A Catalogue of the Arm. Manuscripts in the Brit. Museum, London, 1913, No. 18:

Բ. — Մարգարէ Երէջ, որդի Գրիգոր Քահանայի և Նորխաթունի, 1475ին, Բալուի Նեխրի գիւղին մէջ, Ս. Աստուածածնի հովանիին տակ, օրինակած է Աւետարան մը, բոլորգիր. — Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Յուլյակ Զեռ. Վենետիկի, Ս. Ղազար, 1914, թիւ 144:

Գ. — Ղուկաս Երէջ, 1518ին, Հաւհաւայ Վանքին մէջ, Ս. Աստուածածնի հովանիին տակ, սկսած է օրինակել, բոլորգրով, ձառնար մը, խաթուն Մելիքի և իր ամուսնին՝ Սքանդարի յանձնարարութեամբ. բայց մահը վրայ հասած է և չէ կրցած աւարտել: — Սարգիսեան, թիւ 234:

Դ. — Մելիքիւթ Քահանայ, հայր Գրիգոր Սարկաւազի, 1518ին, միւսնոյն վայրին մէջ շարունակած և լրացուցած է վերոգրեալ կրտստ մնացած ձառնարը:

Ե. — Անտոն Եպիսկոպոս, 1573ին, Հաւաւայ Ս. Աստուածածնի Վանքին մէջ, օրինակած է Աւետարան մը. — Գ. Վ. Արուանձտեանց, Թորոս Աղբար, Բ. Հատոր, 1884, Կ. Պոլիս, էջ 376:

Զ. — Սիմէոն Սարկ. Ռապայցի, մահանուն Սառուխան, 1623ին, Ս. Աստուածածնի հովանիին տակ նորոգած և կազմած

է Աւետարան մը, յառաջնորդութեան Տէր Սիմէոն Արհիեպիսկոպոսին, որուն իբրև սպասաւոր կը յիշուին Տէր Սահակ, Տէր Աւետիս և Տէր Ղուկաս. — Սարգիսեան, Յուլյակ, Ա. Հատոր, էջ 628-9:

Է. — Մեսրոպ Երէջ, 1642ին, Հաւաւ գիւղին մէջ օրինակած է Աւետարան մը. — Թորոս Աղբար, Բ., էջ 375:

Ը. — Թաղէոս Գրիլ, ծնողքը Կարապետ Երէջ և Մարգարիտ, վարպետը Մաշտոց Սարկաւազ, 1647ին, Բալուի մէջ, Ս. Լուսաւորչի հովանիին տակ, օրինակած է ձառնար մը, Կարապետ Վարդապետի խնդրանքով. — Գ. Վ. Արուանձտեանց, Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 116:

Թ. — Յովհաննէս Երէջ, որդի Տէր Մեսրոպի և Սերմուղի, հղբայր Գասպար Սարկաւազի, որմէ ուսած է գիր, և կենակից Մարիամու. 1692ին, Բալուի Աւիվա գիւղին մէջ, օր դառն Ս. Կիրակոսայ և Ս. Սարգսա և Ս. Գէորգա Զաւարժարինո, օրինակած է Մաշտոց մը, բոլոր գրով. — Հ. Զ. Վ. Տաշեան, Յուլյակ Զեռագրաց, Վիեննա, 1895, թիւ 258:

Այս թուականին Բալուի մէջ սաստիկ մահ պատահած է և հայերէն մեռած են շուրջ 1000 անձեր, որոնցմէ վեցը քահանայ: — Սարգիսեան, Յուլյակ, Ա. Հատոր, էջ 630:

Գ. — ՀԱՅ ԳՐԻՉՆԵՐ Ի ԿԵՂԻ

Կեղի կամ Քղի քաղաքին մօտ ունեցած ենք տասնեակ մը վանքեր, որոնց մէջ ամենէն նշանաւորն է եղած Յուլյաչի (Պալէ պաչի) Վանքը, յանուն Ս. Կարապետի Վանքին առաջնորդներէն յիշատակելի են, Մելիքիսեթ (1442), Ներսէս Եպո. (1522), Մարգարէ Արքեպո. (1547), Պետրոս (1559), Մարգարէ Արքեպո. (1576), Յովհաննէս (1576), Ղուկաս Կեղեցի (1588-1600), Մարտիրոս Տարօնեցի (1600-1639), Ստեփանոս Արք. Ուրօնեցի (1639-1651), Կարապետ Արքեպո. (1663), Ստեփանոս Արքեպո. (1694-1703): Վերջին առաջնորդը եղած է Գեղամ Վրդ. Թէվէթէիան (1912-14):

Կեղի քաղաքին և շրջակայ վանքերուն մէջ գործող գրչութեան սպասարկուներէն մեղի ծանօթ են հետեւեալները, ժամանակագրական կարգով:

Ա. — Մնտիրիոս Կրօնաւոր, Խլպաշի Ս. Կարապետ Վանքին մէջ օրինակած է,

1. — Աւետարան, 1442ին, Ողուէ մելիք խաթունի պատուէրով: Յիշուած են Վանքին Առաջնորդ Մելիքիսիթ, և մարաններ՝ Յովանէս Քհն., Կիրակոս Քհն., Վարդան Քհն., Ստեփանոս Քհն., և Աստուածատուր Քհն.: — Հանդ. Ամս., 1950, էջ 437:

2. — Աւետարան, 1456ին. — Դանդ Վրդ. Փրկալէմեան, Նօտարք Հայոց, Կ. Պոլիս, էջ 183:

Բ. — Ստեփանոս Եպիսկոպոս, 1464ին, Խլպաշի Վանքին մէջ, Ս. Կարապետի հովանիին տակ, օրինակած է Աւետարան մը: Տեղւոյն Կրօնաւորներէն կը յիշուին, Տէր Յովանէս, Տէր Նիկողոս, Տէր Կիրակոս, Տէր Մելիքիսիթ, Տէր Յովանէս, Տէր Մաշաքիա, Տէր Սիմաւոն, Տէր Դաւիթ, Տէր Աստուածատուր, և Տէր Կարապետ. — Գ. Վ. Արուանձանեանց, Քորոս Աղբար, Բ. Հատոր, Կ. Պոլիս, 1884, էջ 341-2: Պօղոս Ծ. Վ. Նաթանեան, Արտօսը Հայաստանի, Կ. Պոլիս, էջ 150-152:

Գ. — Մեարոպ երէց, Գրիչ և Ծաղկոզ, որդի Տէր Մաղաքիայի և Մարիամի. իր վարպեան է եղած Յակոբ Սարկաւազ. 1588ին, Կեղի քաղաքին մէջ, Ս. Լուսաւորչի հովանիին տակ, օրինակած է Աւետարան մը, բոլոր գրով, ի վարդապետութեան տէր Դուկաս քաջ բարունապետին, որուն աշակերտած է զիր և ծաղիկ սօրվելու. — Հ. Յ. Վ. Տաշեան, Յուցակ Ձեռագրաց, Վրեննա, 1895, թիւ 308:

Դ. — Աստուածատուր երէց, ծնողքը Տէր Մաղաքիա և Մարիամ, եղբայրը Արիմելէք Սարկաւազ, տիկինը Սանդատայ խաթուն, որդին Քորոս, վարպետները Աստուածատուր Սարկաւազ և Տէր Կարապետ. ԺՁ դարուն, Կեղի զիւղաքաղաքին մէջ, ընդ հովանեաւ Ս. Յակոբին և Ս. Նշանին և Ս. Սարգիսին և Ս. Լուսաւորչին, և յառաջնորդութեան Դուկաս Վարդապետին, օրինակած է Աւետարան մը, բոլոր գրով, զոր ծաղկած է Կարապետ երէց. — Երուանդ Լալայեան, Յուցակ Ձեռագրաց Վասպուրականի, 1915, թիւֆլիս, էջ 759-760:

Ե. — Մելիքիսիթ Արդ. Քօթահնացի, Գրիչ, Ծաղկոզ և Կազմոզ. ի Կեղալեան, Ս. Աստուածածնի հովանիին տակ, օրինակած է.

1. — Ժամագիրք, 1627ին, ի յառաջնորդութեան Ս. Ախարին Մարտիրոս Երաժիշտ Վրդ. ի Տարօնեցոյ (+ 1627, Սեպտ. 16, ի դուռն Մշու Ս. Կարապետին). — Հանդէս Ամս. 1950, էջ 434:

2. — Ժամագիրք, 1628ին, բոլորագիր, ի վայելումն մահտասի վարդան Դպրի. — Հ. Յ. Վ. Տաշեան, Յուցակ Ձեռագրաց, Վրեննա, թիւ 195:

Չ. — Աստուածատուր Գրիչ, 1641ին, ի քաղաքն Կեղի. ընդ հովանեաւ Ս. Սարգիսի և Մարտիրոսի, ի զիւղն որ կոչի Դանիէլ, ի դուռն Քուխ Մանուկին, օրինակած է Աւետարան մը. — Հանդ. Ամսօրեայ, 1950, էջ 434, ծնթ. 3:

Ի. — Մելրոն երէց Կեղեցի, օրինակած է.

1. — Յայսմաուրէք, 1694ին, Խլպաշի Ս. Կարապետի Վանքին մէջ, Ստեփանոս Արքեպիսկոպոսի Առաջնորդութեան օրով, Տարօնեցի Տօնականի համար. — Հանդէս Ամսօրեայ, 1950, էջ 439-440:

2. — Մաւոց, 1718ին, Կեղի մէջ, ի Դուռն Ս. Յակոբի և Ս. Աստուածածնի, բոլոր և նոսր գրով: Սոյն ձեռագիրը կը պարունակէ սրտատուց տաղ մը, 19 տուն, ձևըս Մելքոն երկցու Կեղեցոյ տապանալիւր թողին վրայ Սամելայս վերտառութեամբ, որուն սկիզբն է.

«Մահն ու գրողը եկաւ աշխարհիս տիրեց, գրուած 1712 թուին: — Ազգագրական Հանդէս, Բ., 1897, էջ 291-3:

3. — ձառքնիք, 1721ին, բոլոր գրով. — Կարենեանց, Մայր Յուցակ Ձեռագրաց էջմրածնի, 1863, թիւֆլիզ, թիւ 893:

Ն. ԵՊՍ. ԵՐՈՎԱԿԱՆ

Ն Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Շնորհակալութեամբ ստացանք Տիար Մ. Ճէճեանի կողմէ Ս. Յակոբեանց Ձեռագրաց Մասնագրարանին ներկրած մագաղաքեայ փոքրիկ շարակնոց մը, որոնց կիսով չափ պահուած յիւսակարանէն կը հասկցուի թէ գրուած է 24 = 1311 թուին, Կիլիկիա, Կոնստանտնուպոլիս:

Տեսուչ Ձեռագրասան Ս. Յակոբեանց  
ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

# ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

## Աւստրալիոյ Հայ Միլիոնատեր

Աւստրալիա պզտիկ երկիր մը չէ. շատ ընդարձակ և հսկայ տարածութիւն մը ունի, աւելի քան Միացեալ Նահանգները, բայց տակաւին աճալի է բնակչութեամբ: Ծովեզերեայ քանի մը քաղաքներու մէջ կեդրոնացած է զրեթէ բնակչութեան մեծամասնութիւնը: Այդ քաղաքներէն առաջինն է իր տարածութեամբ և բնակչութեամբ Սիտնին, ուր աշխարհի բոլոր մասերէն և բոլոր լեզուներէն մարդոց կը հանդիպիս:

Հօս կեդրոնացած է նաև մեր փոքրիկ գաղութը: Մարդիկ մեզի շատ չեն ճանչնար այստեղ, մեր թիւը չափէն աւելի պզտիկ է տակաւին այս երկրին մէջ: Հիներէն ոճանք տակաւին կը յիշեն Առաջին Մեծ Պատերազմի հայկական ջարդերու և տարագրութեանց մասին. միայն մեր զբոսախոսութիւններով ծանօթ ենք, մեր լայտակարէն անծանօթ կը մնան այս երկրին:

Հօս կ'ուզեմ տալ այս անգամ ամփոփ տեղեկութիւններ, որոնք ընկերային ու համայնքային բնոյթ ունեցող ձեռնարկներ և գործեր են, և որոնք պիտի ծառայեն կերպով մը մեզի ծանօթացնելու Աւստրալիական շրջանակներու և փոխադարձաբար:

Ապրիլ 17ի երեկոյեան, Պր. Մ. Անուարեանը եկաւ իր գոտեր հետ, ինծի աօրն ու գացինք Արքր ՊիւՅե-Պարի բացման ճաշկերոյթին, ուր հրաւիրուած էինք: Քաղաքին կեդրոնը, գեանայարկի մը վրայ, ոչ շատ ընդարձակ տեղ մը, ուր ոչ սեղաններ կային յարդարուած, ոչ ալ աթոռներ: Նորաչէն սանդուղներէն վար՝ Տէր և Տիկին Յարութիւն Ակիւնեանները կեցած մուտքին՝ կ'ընդունէին եկողները մէկիկ մէկիկ: Չեռքի սեղմուճէն յետոյ ներս անցանք: Տաս վայրկեան յետոյ լեցուեցաւ ամբողջ ճաշարանը: Նորաչէն խոհանոցի բոլոր սպասները, անօթներն ու սպասասեղանները կը փայլէին, տասնեակ մը խոհարարներ և սպասեակներ երկու սեռէ, իրենց

սպիտակ համազգեստներուն մէջ սեղմուած, կարծես կը սպասէին հրամանի կազմ ու պատրաստ: Ամէն նոր մանող կ'առաջնորդուէր զէպի Պարը և կ'առնէր իր նախասիրած ըմպելին: Ասեղ ձգելու տեղ չկար, բոլորը ստքի վրայ: Տէր և Տիկին Ակիւնեանները իրենց հիւրերուն կը մօտեային հաճոյակատարութեամբ մը նիւթուած. բոլորին ալ յանուանէ կը ճանչնային: Հօս հաւաքուածները հասարակ մահկանացուներ չէին, բացի ինձմէ. բոլորն ալ բարձրաստիճան մարդիկ, Բարլամկերի անդամներ, Քանկրեուկներ, մեծ դատաւորներ, փաստաբաններ, հիւպատոսներ, մեծ վաճառականներ ու մեծ հաստատութեանց տնօրէններ կամ ներկայացուցիչներ: Բոլորն ալ ուրախ ու զուարթաստի տրամադրութեամբ իրարու կը մօտենան, ծանօթներն ու անծանօթները. թերևս ամենէն նորը և անծանօթը ես եմ իրենց մէջ և միակ կրօնական զէմքը, կարծես սխալ տեղ մը ինկած ըլլամ: Պր. Ակիւնեան բարի եղաւ անոնցմէ ումանց հետ ծանօթացնել զիս, որոնք կարևոր զիրք ու պաշտօն ունէին այս երկրին մէջ: Առաջուընէ արդէն ուրիշ առիթներով ծանօթացուցած էր զիս մի քանիներուն հետ, այս անգամ ուրիշներ, աւելի կարեւոր մարդիկ, որոնք տարիներու ընթացքին մեր Յարութիւնին մտերիմ բարեկամները գործած էին. անոնք զրեթէ բոլորն ալ յաճախ իր տան պարտէզին մէջ վայելած են իր սեղանը և այսօր բացատրիկ առիթով մը հրաւիրուած են հոն, նոր ճաշարանի բացման, բոլորն ալ իր հին ու նոր բարեկամները: Խմիչքները ջուրի պէս կը հօտին, Բաքոսը կը ցնծայ, մարդիկ երթալով աւելի խօսուն ու աւելի զուարթ կը դառնան, պատկերհանը այդ բազմութեան մէջ կը նկարէ խումբ խումբ, ամէն կողմ, բոլոր աչքի զարնող զէմքերը և խումբերը. Յարութիւնը ամէն տեղ է, ժպտալ զէմքին կը մօտենայ խումբերուն, յայտնի զէմքերուն ու մտերիմ բարեկամներուն. բոլորը առինքնուած են իրմով. մարմնեղ ու զուարթ զէմքով հաճակիրիլ անձ մըն է Յարութիւնը կամ Արթըրը, ինչպէս կը կուեն զինքը հօս սիրուած է հաւասարապէս բոլորին կողմէ: Երբ դեռ ամէն բան այնքան խճողուած էր, առիթը ունեցաւ ինծի ներկայացնելու հետեւալ քանի մը կարևոր մարդիկը, որոնց

անուանները թուղթի մը վրայ կրցայ պահել. դատաւորներ, Ռիչարտս, Թէյլըր, Բարլա, մէնքի անդամներ՝ Թօնի Լիւշէթթէ, Ս. Քօնիկ, Տօքթ. Վաթքինս, Կրիֆիթս, Մօրկան, Աեկարօրներ՝ մաք Մաւն, Կօրարն Պրաուն, Արմսթրօնկ, Պ. Լարճ, Շուրջ 200 հոգի կային այդ ճաշկերոյթին, բոլորն ալ որնէ բանով նշանաւոր, կամ պետական և կամ առևտրական ասպարէզի մէջ ու հրապարակի վրայ:

Աւստրալիոյ մէջ առաջին անգամն էր որ ասանկ հաւաքոյթի մը և ընկերական շրջանակի մը մէջ կը գտնուէի. շատեր կը հետաքրքրուէին իրրև եկեղեցական զէմք մը, մանաւանդ երբ կ'իմանային Ամերիկայէն եկած ըլլալու՝ շատ աւելի տաք վերաբերում կ'ունենային: Կը խօսէինք եկեղեցական ու կրօնական զանազան խնդիրներու շուրջ. լուրջ և հաճելի փոխանակում մաքերու և տեսակէտներու. վերջապէս, անանկ շրջանակ մը՝ ուր ամէն մէկը բան մը ունէր տալիք և ամէն ոք կը լսէր ու կը սորվէր նոր բան մը:

Ջուլիան և ձեռքի երգեհոնը մեղմօրէն կը մեջէին ու կը մրմնջէին տարրեր բաներ մեր խօսակցութիւններէն, եղանակներու մեղմ ու հեղատան ալիքներ կը հոսէին մարդոց ականջներէն ու սիրտերէն ներս, քաղցր օրօրի մը պէս մարդոց զգայարանքներն ու ջիզերը եթերային անուշութեամբ մը ցօղելով հանդարտ ու գերերկրային մեղեդիներով: Պահը զգլխիչ ու ներշնչող էր զինիի ու երգի անրջային շունչին տակ: Ատամոքսները արամաղիր խմիչքէն յետոյ ուտելու, Արթըր աստիճանի մը վրայէն կը յայտարարէ. — Ծաշերը պիտի մատակարարուին խոյն: Փուռէն դուրս կ'ելլեն խողեր, հնդկահաւեր ու հաւեր, կը բացուին պօսպղանցող կաթաններու բերանները, համազամ կերակուրներու այլազան հոտերը կը քրքրեն քիմքերը. ամէն մէկը վերցուցած իր պնակը, կարգի կեցած է իր նախաթրած կերակուրին առջև. կերակուրներու այլազանութիւն, արեւելեան և արեւմտեան ճաշակով, սպասուորները արագ արագ պնակները կը լեցնեն ու մարդիկ առած կը սկսին մեծ ախորժակով ճաշակել սոքի վրայ կամ շուրջանակի շինուած խորշերուն առջև. ինքնայատուկ ճաշարան մըն է, իր տեսակէն միակը ամբողջ Աւստրալիոյ մէջ:

Ծաշէն յետոյ կրկին կը լեցուն բաժակները, մարդիկ զարծեալ կը խմեն, այս անգամ յուլօրէն. վերջապէս ճառագոստ մը կը բարձրանայ աստիճանի մը վրայ ու կը սկսի. «Տիկնայք և Պարոնայք»: Բոլոր իրենց ուշադրութիւնը կը զարձնեն զէպի խօսողը. «Արթըր Պիւֆէ-Պարին հանդիսաւոր բացման օրն է այսօր, կը տեսնէք բոլորդ ալ թէ ինչ ինքնատուրպ և ամենէն արդիական Պիւֆէ-Պարն է», կը գոզէ Արթըրի ճաշակը և առևտրական տաղանդը. «պատուարեր Աւստրալիացի մըն է և օգտակար մեր երկրին, իմ միլիոնատէր բարեկամս Արթըր Ակինեանը» կ'ըսէ ու կը վերջացնէ: Աւրիշ մը վաճառական բարեկամներէն կը գոզէ անոր ձիբքերն ու ընկերական յաւկութիւնները, աւելցնելով. «ոչ թէ միայն վաճառական, այլ նաև իրրև ճաշարանապետ մը»: Մենք, հոն գտնուող չորս կամ հինգ հայերս կ'ուրախանանք ու հպարտ կը զգանք ինքզինքնիս որ վերջապէս Աւստրալիոյ մէջ ունինք մէկը որ մեր անունը բարձր կը պահէ և զիրք ունի ընկերական շրջանակներու մէջ:

Յարութիւն Ակինեան Սերաստացի հայ մըն է. իր նախահայրերը գաղթած են 1875ի տեսները Կարինէն: Հ. Ն. Ակինեանի հետ միևնոյն ընտանիքէ կը սեռին: Գաղթականութեան ատեն Հ. Ներսէս Ակինեանի մեծ հայրը կը գաղթէ զէպի Արգոլին, Կոզկաս, իսկ Յարութիւնին մեծ հայրը՝ Սերաստիս:

Յարութիւնը Առաջին Մեծ Պատերազմի որբերէն է, զաւակը Առաքելի և Փարիզի Կորսնցուցած իր հայրն ու մայրը այդ մեծ եղեռնի ու տարագրութեան ժամանակ, ցմբուր քամած է տարագրութեան դառն բաժակը: Ունի եղբայր մը՝ Զրանդ և հօրեկոր զաւակ մը Արա Ակինեան ի Պէյրութ և երկու ուրիշ հօրեկոր որդիներ, Խորէն և Վահագն Ակինեաններ հոս Աւստրալիա: Ամերիկա ևս ունի հօրեկոր զաւակներ:

Յարութիւն հետեւած է երկու տարի Պէյրութի Ամերիկեան Համալսարանի ատամնաբուժական դասընթացքին, բայց չբաւարութիւնը պատճառ եղած է որ կիսատ ձգէ իր ուսումը և նետուի կեանքի շարաչար ու տաժանագին աշխատանքի բովին մէջ:

1927ին եկած է Աւստրալիա. հոս ևս հանդիպած է բաւական դժուարութիւններու: Սկսած է Աւստրալիոյ նաւահանգիստ-

ներուն մէջ համեստ գործաւորի կեանքով, երբ դեռ տեղացիները անհատ աչքով կը նայէին նորեկներուն վրայ իբրև օտարահաններ: Հանդուրժած է կեանքի բոլոր զմայակ բերումներուն և կամաց կամաց սկսած է կեանքի աստիճաններէն վերելակել և ցարդ կը շարունակէ վերելքը. արհամարհելով բոլոր խաչընդոտներն ու զբռնաբարձիւնները: Տակաւին երիտասարդ ու առողջ, մխրճուած ասեղանական ամէն կորգի ասպարէզներու մէջ յանդուզն և անվախ կերպով, կը կերտէ իրեն համար բացառիկ դիրք մը այս երկրին մէջ:

Առատական ասպարէզին մէջ ունի բուական նախանձողներ, Հրեաներ և Յայններ: Անոնք երբեք չէին կարծեր թէ ան պիտի կրնայ յաջողիլ իր ձեռնարկած գործերուն մէջ և այս վերջին գործը բոլորովին ձախողութիւն մը կը նկատէին, անոր մէջ ալ յաջողութիւնը ժպտեցաւ իրեն առաջին իսկ վայրկեանէն: Օրը 2-3 հազար յաճախողներ կ'ունենայ միայն ճաշարանը, ուր կը զմեն բարձրաստիճան մարդիկ ու պաշտօնեաներ միայն:

Յարութիւնի միակ խրատը եղած է իր հսկող հայրենակիցներուն օրերեք իրենց սիրտը չգործածեն այս երկրին մէջ, այլ միայն իրենց ուղեղը: Շատ լաւ գիտէ օր հայերս առհասարակ զգացումով կը գործենք, ատոր համար զժուար կ'ըլլայ մեզի յաջողիլ կեանքի ասպարէզին մէջ ու նուազութիւններու առջև կ'ընկրկինք յաճախ, ըլլալով դիւրագրգիռ ու անհամբեր, բայց երբ խելքն է օր կը գործէ ու կը տիրապետէ մարդոց աօրեայ գործունէութեանց մէջ, աւելի անյողողող ու աւելի յաջող կերպով կարելի կ'ըլլայ դիմադրել կեանքի զահավիժող հոտանքներուն դէմ:

Ազգասէր հայ մըն է Պր. Ակինեանը: Իրմէ յետոյ այս երկիրը եկողներէն շատերուն օգնած է նիւթապէս և բարոյապէս, մինչև որ կրցած են անոնք ինքզինքնին յարմարցնել տեղական պայմաններուն: Ան տեսակ մը հիւպատոսը կամ ներկայացուցիչն է զազութիւն, շատեր իր միջոցաւ յաջողած են մտնել այս երկիրը. անոր կը դիմեն բոլորն ալ, իր մանկութեան կամ երիտասարդութեան ընկերներն ու բարեկամները և կամ անոնց յանձնարարութեամբ եկող հայերը:

Յարութիւնին Տիկինը Աւստրալիացի ազնիւ տիկին մըն է: Աւին երկու ազգիկ զաւակներ ցարդ, որոնք շատ կը սիրեն զինքը:

Արթըրը իր նոր բացած ճաշարանի գործէն զատ ունի նաև ուրիշ գործեր. Կիֆի Շօր, չինական և հնդկական ձեռագործներու գեղեցիկ խանութներ, երկու Սրանի մէջ, մէկ ալ Մելպըրն, ունի նաև ուսեստեղէնի, Տէլիքսի խանութ մը ի Սրանի, բոլորն ալ քաղաքին կեդրոնը և ամենէն բանուկ պողոտաներուն վրայ և բոլորն ալ իր սեփական կալուածները: Ասոնցմէ զատ կը զբաղի նաև տուներու առուծախով և ուրիշ գանազան շահուէտ գործերով:

Մենք մեծ յոյս ունինք իր վրայ, որ ան պիտի օգնէ մեզի նիւթապէս և բարոյապէս, որպէսզի մենք օր առաջ ունենանք մեր առաջին Հայ Եկեղեցին Աւստրալիոյ մէջ: Պր. Ակինեան իր ազգին հանդէպ ալ անտարբեր չէ, օր մը կը հաւատամ մեծ բարեբարի անուն պիտի ձգէ իր ազգին մէջ, յաւիտենական յիշատակելի կոթող մը կանգնելով իր և իր գերդաստանի անունին: Ինքը որութիւն տեսած ու տարագրութեան արիւնտ ճամբաներէն անցած, միտքն ու հոգին թրծուած հայութեան տառապանքներով, վստահ եմ թէ անոր բարւոյն ու փառքին համար ոչինչ պիտի խնայէ:

Աւրախ ենք մենք մեր Յարութիւնով, կը մտղթենք իրեն լաւագոյն յաջողութիւններ, թող բախտը ժպտի իրեն միշտ, որպէսզի այդ նիւթական բարիքներէն շինէ իրեն հոգեկան գեղեցկութիւններ ու իրական, անանցանելի ու անմահ փառքի պատուանդան մը կանգնէ իր անունին, իր ազգին տալով իբրև անոր արժանաւոր մէկ զաւակը իր լաւագոյն սրտի և հոգիի տուրքը, ինչպէս իրմէ առաջ ըրած են շատ մը մեծ սրտով ու մեծ մտքով հայ ազնուականներ և որոնց անունները փառաւոր էջերը կը կազմեն մեր ազգային պատմութեան: Անոր սիրտը թրթուուն ու բարի է ազգային զգացումներով ու միտքը կորովի, ընելու համար այն բոլոր մեծագործութիւնները՝ որոնք յատուկ են մեծ մարդերու:

Սիսնի, 20. 5. 55 ԱՍՈՂԻԿ Ծ. ՎՐԴ.

(ՄԵՆԵՆԸ ԵՄԵՆԵՆԸ)

**ԸՆԿԵՐՄԵՆ**



Պիոնի այս համարի ընկերային բաժնին մէջ, բարգմանորար մեր ընթերցողներուն կը ներկայացնենք հեռաբերական ընկերային փոփոխութիւններ որոնց համար սակայն կ'արժէ մտածել: Թարգմանութիւնը կառարած ենք Ամերիկեան մեծ սպառում ունեցող Ամսուրեայ հանդէսէ մը:

ԽԸՐ.

Անձնապէս չափազանց մաքուր և կոկիկ ըլլալու մարմանը մը ունեցած չեմ երբեք: Այն բոլոր մարդերը որոնք ծայրայեղ նրբութիւն, ճաշակ և մաքրութիւն մը ի գործ կը դնեն իրենց բոլոր արարքներուն մէջ կը զարմացնեն զիս: Կը փափաքիմ շուրջս քիչ մը աղտոտ տեսնել: Այս պարագան միշտ կը յիշեցնէ ինծի թէ շուրջս կեանք գոյութիւն ունի, մարդիկ կան ինծի հետ և վերջապէս գործունէութիւն մը ունինք: Ամենէն մաքուր տեղերը թանկարաններն են ուր ճաշակով շարուած են . . . մեռած բաներ:

x

Երիտասարդներուն համար անհասկնալի և սակայն տարէցներուն համար հաճոյալի երևոյթ մըն է չերթալը: Երբ երիտասարդ ենք ցաւ և տառապանք է չերթալ: Կը զգանք թէ կեանքէն դուրս ձգուած ենք, և թէ դուրսը շքեղ թափօր մը կայ հաճոյքներու սրոնցմէ անմասն պիտի մնանք ներս

փակուելով և մեր առանձնութիւնը ողբալով: Այսպէսով կը տառապեցնենք մենք զմեզ մեր կեանքի Ապրիլին:

Արդ՝ ոչ միայն փոյթ չեմ ընել երբ հրաւիրագիր չեմ ստացած, այլ՝ հաճոյք մը կ'ունենամ երբ կը գիտնամ որ պիտի չերթամ: Կը կարծէ՞ք որ չեմ ուզեր հաճոյանալ: Կը հաճոյանամ . . . Չերթալով:

x

Անցեալները բարեկամ մը կ'ըսէր. — «Կ'ատեմ սեէ մէկուն պարտական ըլլալը: Մեզմէ շատեր, բարեկամիս ատելութիւնը կը բաժնեն արդարացիօրէն: Երբ ծանօթ մը բարիք մը կ'ընէ մեզմէ սեէ մէկուն, չենք կրնար երախտապարտ չըլլալ, և ընդունիլ տրուածը իբրև լոկ սրտաբուխ նուէր: Անմիջապէս դուրս կ'ելենք նուէր մը գնելու համար մեր ծանօթին և ինքզինքնուս ըսելու համար որ մեզի եղած բարիքը փոխադարձաբար հատուցանեցինք: Եթէ Ա-եանները ճաշի հրաւիրած են իրենց բարեկամ Բ. ընտանիքը, այս վերջիններն ալ անպայման հանգիստ պիտի չըլլան մինչև որ փոխադարձաբար ճաշի չհրաւիրեն Ա-եանները:

Մէկու մը պարտական մնալու ժամը բարեկամութիւնը ատելորական գեանի մը վրայ կը դնէ. ի վերջոյ, այս պարագան արդեւ մըն է բարեկամի մը համար որուն կը զրկենք մեզի հանդէպ բան մը ըրած ըլլալու երջանիկ հաճոյքէն:

x

Ունէ աշխատաւոր, երբ իրեն յանձնը-  
ւած գործ մը լաւագոյն ձեւով կը կատարէ  
առաւելագոյն շահ մը կ'ապահովէ ինքզին-  
քին, Այս շահը բոլորովին տարբեր է այն  
դրամէն զոր գործի մը առիթով իրրե վար-  
ձատրութիւն ձեռքէ ձեռք կը փոխանցուի:  
Այս շահը ի գործ դրուած ճիգին գումարն  
է և այն ներքին գոհունակութիւնը զոր  
մարդ անխուսափելիօրէն կ'ունենայ երբ  
գործ մը յաջողութեամբ կ'աւարտէ: Ան-  
կապած մեր զխտութիւնը անցեալի մեր  
ունեցած փորձառութիւններուն գումարն է:  
ուստի փորձառական շահ մըն ալ կայ իւ-  
րաքանչիւր գործի աւարտին: Այս շահը  
անաւասիկ մեր էութեան մէկ մասն է:  
Չենք մտնար և որեւէ տտեն կրնանք ու-  
նենալ զայն:

Ունէ աշխատաւոր երբ այս մտածումը  
արմատացած կերպով ունենայ իր մտքին  
մէջ, հարիւր առ հարիւր առիթը ունի յա-  
ռաջգիմելու:

x

Դժբախտաբար շատեր կը կարծեն թէ  
զիրաւ ցնցուիլն ու վարմանք ցոյց տալը  
սրբութեան նշան մըն է, մինչդեռ սուրբերն  
իսկ կարգ մը մարդկային երեսիթներու առջև  
պիտի չցնցուէին այնպէս ինչպէս ցուցա-  
մոյները յաճախ կ'ընեն: Բնականաբար սուր-  
բերը պիտի ցուէին, վշտանային, տառա-  
պէին, բայց երբեք ցուցամուրական արարք-  
ներու մէջ պիտի չըլլային: Զարմացական  
ալիանդակ ձեեր առնել, զգացնել որ ուժ-  
ղին ցունց մը կը կրես, սնափառութիւն է

և ի վերջոյ փափաք մը և միջոց մը՝ ցոյց  
տալու համար այլոց թէ որքան բարձր ըն-  
կերային դիրք մը ունիս և ի՛նչ ... զգա-  
յուն խիղճ մը:

x

Առարկութիւններէն մէկը թէ ինչո՞ւ  
կինը պէտք է ստղատագրուիս և մտնէ  
առեարական ստղատէզ կամ այլ ազատ  
ստղատէզներու մէջ սա է թէ կինը գերի  
մըն է: Վիսաւոր առարկութիւնը այն է թէ  
այլ մարդը իր առօրեայ կեանքին մէջ ունի  
զեզեցիկ արկածախնդրութիւններ, մրցակ-  
ցութիւն ուստի և շահ:

Սովորական մարդ մը անսահմանօրէն  
աւելի գերի է քան իր կինը որ խաղաղու-  
թեամբ նստած իր տունը կը կարծէ թէ  
ձանձրախտէ կը տառապի: Մարդը զաժան  
օրէնքներու կը հպատակի, շատ անգամ  
այնպիսի մարդոց պէտք է ծառայէ և գո-  
հացնէ որոնց հանդէպ ոչ յարգանք ունի ոչ  
ալ համակրանք: Ծատ մը պարագաներու  
չկրնար նոյնիսկ ինքնատիպ ըլլալ: Իր ամ-  
բողջ կարողութիւնները պիտի տրամադրէ  
կազմակերպութեան:

Միւս կողմէ սակայն իր կնոջ իրաւա-  
սութիւնները անհամեմատօրէն աւելի են:  
Անիկա ձեռով մը արուհին է առեարական-  
ներուն, տան կարգադրութիւններուն մէջ  
բացարձակ հեղինակութիւն ունի, կրնայ իր  
երեւակայութիւնն ու ճարտարութիւնը բտտ  
կամս գործածել, և ի վերջոյ իր տան իշ-  
խանուհին է: Եթէ այս պարագան գերու-  
թիւն է, մարդիկ ալ պիտի ուզեն քիչ մը  
ունենալ ատկէ:

**Ս. ՅԱԿՈՒԻ ՆԵՐՍԷՆ**

**ՆԿԵՂՆԵՍԱՆՆԵՐ - ԲՄՄՍԱՆՆԵՐ**

- Ուր. 1 Յուլիս. — Վաղուան նախատեսա-  
կէն ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր  
եպ. Գողարեան:
- Եր. 2 Յուլիս. — Տօն Ս. Լորն մերջ Դիզորի  
Լասուրջին (Կիւս Եղիսրաց): Ս. Գատարազը մա-  
տուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատ-

րան մէջ: Ժամայրան էր Լոգ. Տ. Յակոբ Վրդ.  
Վարդանեան:

- Կիր. 3 Յուլիս. — Ս. Գատարազը մա-  
տուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատ-  
րան մէջ: Ժամայրան էր Լոգ. Տ. Վարսեման  
Վրդ. Գապարանեան:
- Դչ. 6 Յուլիս. — Վաղուան նախատեսակը  
պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Լանդիսապետ էր  
Գեր. Տ. Սուրեն Եպ. Քէմնանեան:
- Եչ. 7 Յուլիս. — Ս. Թարգմանչացն Սահակայ  
տարազը՝ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ  
ժատոյց և քարոզեց Լոգ. Տ. Զաւէն Վրդ. Չին-  
չինեան. բնարան ունենալով ՎՄՔ զարդարեցին  
չինեան. բնարան ունենալով ՎՄՔ զարդարեցին  
անօրինաբար զիմաստս անեղին ...:
- Եր. 9 Յուլիս. — Վաղուան նախատեսա-

կին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր Եղս. Պողարեան:

● Կիր. 10 Յուլիս. — Գիւս Տիոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը՝ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարի Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց չող. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան շանդիսաւոր երթ ու դարձին նախագահեց Գեր. Տ. Նորայր Եղս. Պողարեան:

● Աւր. 15 Յուլիս. — Վաղուան նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր Եղս. Պողարեան:

● Եր. 16 Յուլիս. — Երկաստան առաւելոցն Բրիտանի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամասը մէջ: Ժամաբարն էր Չոգ. Տ. Նաշիսեան Վրդ. Պայրաժեան:

● Կիր. 17 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասը մէջ: Ժամաբարն էր Չոգ. Տ. Վաղգէն Արդ. Գրգրբուժեան: Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն, նորոգ հանդուցեայ Գեր. Տ. Սուրէն Արքեպոս. Մանասեանի հոգւոյն ի հանդիստ, անոր մահուան ակթօրէքին առթիւ:

● Աւր. 22 Յուլիս. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. էջմիարմին մասը մէջ: շանդիսաւորն էր Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան:

● Եր. 23 Յուլիս. — Յիւստակ Տապանակին: Ս. Պատարագը ի Ս. էջմիարմին մատոյց չող. Տ. Վաղգէն Արեղայ Գրգրբուժեան:

— Վարդափառ հանդիսաւոր նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան:

— Երեկոցէմին, Մայր Տաճարին մէջ. Գեր. Տ. Նորայր Եղս. Պողարեան նախագահեց ղեկեցեցէնի և շահման արարողութիւններուն:

● Կիր. 24 Յուլիս. — Վ.Ա.Գ.Ս.Վ.Ա.Ս. (Տօն Այլախեղութեան Տեառն): Մայր Տաճարին մէջ, մեծ հանդիսաւորութեամբ Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Գեր. Տ. Նորայր Եղս. Պողարեան, անդրադառնալով նորոգ վարձանեայ Ս. Աթոսոյ բարերար վսեմ. Բայուսա Պէյ Կիւլպէնկեանի կեանքին ու գործերու մասին: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան նախագահեց Նորին վսեմութեան հոգւոյն ի հանդիստ կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին:

● Բշ. 25 Յուլիս. — Յիւստակ մեռելոց: Ս. Պատարագը ի Ս. Գլխադիր մատոյց չող. Տ. Նաշիկոզն Վրդ. Արուստեան Ապա, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, նախ Մայր Տաճարին մէջ, այս գաւիթը՝ Երանշնորհ Տ. Կիրեղ Ս. Պատր. Չօր շիրմին վրայ, ինչպէս նաև Մամթաղի գերեզմանավայրին մէջ:

● Աւր. 29 Յուլիս. — Վաղուան նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան:

● Եր. 30 Յուլիս. — Տօն Ս. Թադէոսի առաք.

և Ասնիկոյ կուսին: Ս. Պատարագը ի Ս. Գլխադիր մատոյց չող. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

● Կիր. 31 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Չրեշտակապետ: Պատարագին էր Չոգ. Տ. Նաշիսեան Վրդ. Պայրաժեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի նախագահութեամբ, կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն, Ս. Աթոսոյ Միարան Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեանի մահուան առթիւ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ա Ա Ն Բ

● Բշ. 4 Յուլիս. — Երեկոյեան, Միացեալ Նահանգաց անկախութեան 178րդ տարեդարձին առթիւ, Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Աւր. 8 Յուլիս. — Առաւօտուն, Չոգ. Տ. Չաւէն Վրդ. Չինչլինեան մեկնեցաւ Սիւրիս-Լիբանան, յառաջիկայ զյորոցական տարեշրջանին Ս. Աթոսոյ ժառանգաւորաց վարժարանին համար նոր սաներ արձանագրելու:

● Դշ. 13 Յուլիս. — Երեկոյեան, Ֆրանսոյի Ազգային Տօնին առթիւ, Ֆրանսական Հիւպատոսարանին կողմէ, Տ. Անոսի սրահներուն մէջ տարբուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Բշ. 18 Յուլիս. — Երեկոյեան, Ազգային Ազգային Տօնին առթիւ, Ապառնական Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Եշ. 21 Յուլիս. — Երեկոյեան, Պիմիքայի Ազգային Տօնին առթիւ, Պիմիքական Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Չոգ. Տ. Նաշիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Եր. 23 Յուլիս. — Երեկոյեան, Եթովպոյ շայէ Աէլասիէ Ա. Կայսեր ծննդեան 63րդ տարեդարձին առթիւ, Եթովպական Հիւպատոսարանին կողմէ, Claridge Hotel-ի մէջ տարբուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան:

● Եր. 30 Յուլիս. — Կէսօրէ առաջ, իրամաց Գուրպան Պայրաժի տօնին առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեան, Չոգ. Տ. Նաշիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան այցելութիւն տուին քաղաքի վսեմ. Կառավարիչին, Բաղաքապետին, Ընդհանուր Ոստիկանապետին, Միւլիմիտին և Սէստական Արարիչ Հիւպատոսին:

ԱՄՍԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՆԳԷՍ  
ԺԱՌԱՆԳ. ՎԱՐՓԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԹԱՅԱՐԱՆԻ

Եւ. 7 Յուլիս Ս. Թարգմանչաց տանի իրիկ-  
ուան ժամը 7ին, Ժառ. Վարժարանի հանդիսա-  
սրահին մէջ տեղի ունեցաւ Վարժարանի Ամա-  
լիւրի Մրցանակարաշխութեան Հանդէսը. նա-  
խագահութեամբ Պատր. Տեղապահի Փոխ. Գեր. Տ. Սուրէն Ս. Եղս. Քէմհանեանի և ի ներկայու-  
թեան հրաւիրեալներու:

Ըստ սովորութեան, այս տարի ևս Հանդէսը  
կը բաղկանար երկու մասերէ:

Հանդէսը սկսաւ ձմռան դարձուցիչին Թարգ-  
մանչաց շարականով, յորմենեակ Տեսուչ Լոգ. Տ.  
Հայկազուն Վրդ. Արքայանքան ըրաւ հակիրճ  
բացման խօսքը: Ասոր յաջորդեցին բանաստեղ-  
ծութիւնները զոյգ Սարկիսեաններուն, երկուքն ալ  
պատրաստուած գովելի քննադատութեամբ Բար.  
Գրիգոր Սրկ. Սահակեան խօսեցաւ շէտայոյ նին  
կրօնքը և նիթանտական վերադարձիներ քրիս-  
տոնեայ հայոյ մէջ ներմին շուրջ, իսկ Բար.  
Արմենակ Սրկ. Ներսիսեան Վերադարձի վարդա-  
պետարանը, զայն ներկայացնելով իր կեդրոն  
մշակոյթի, որուն ամենէն յատկանշական երեսն  
է սակայն Գրիգոր Շղթայակերի ու Յովհ. Վոյտի  
նման մեծագործ անմնաւորութիւններու մտաւոր  
տուած ըլլալը, ու ձանրացաւ մասնաւորաբար  
այս զոյգին գործունէութեան մասին: Կարգաց-  
ուեցան նաև շարադրութիւններ, եղան մեներգ-  
ներ ու խմբերգներ. ինչպէս նաև արտաստեղ-  
ծութիւններ՝ Հայերէն (Աշխարհաբար և Գրարար).  
Անգլերէն, Արաբերէն և Ֆրանսերէն լեզուներով:

Հանդէսի Բ. Մասը սկսաւ ճամբանայ Մոյս-  
սիոն շարականով, զոր երգեցին Ժառ. Սաներ:  
Ապա Լոգ. Տեսուչ Լայրուրը կարգաց Վարժա-  
րանի միամեայ կեանքի ու գործունէութեան  
տեղեկագիրը, ուր մանրամասնօրէն նկարագրը-  
ուած էր Վարժարանի ներքին կեանքը, իր զա-  
նազան երեսներով, որով ետք յաջողագոյն աշա-  
կերտներն ու մարդիկներ վարձատրուեցան զիր-  
քերով ու մետալներով: Լուսկ ապա խօսք առաւ  
Գեր. Նախագահ Սրբազանը, որ յանուն Ս. Յա-  
կոբեանց Միարանութեան և ներկայներուն շնոր-  
հակութեամբ յայտնեց Տեսուչ Լոգ. Տ. որուն կրթ-  
թանուէր ջանքերուն շնորհիւ Վարժարանը վե-  
րականցնած է և հասած այսօրուան զեղեցիկ  
արդիւնքին: Ըստ ինչ ամէն հաստատութիւն  
ունեցած է իր վերելքներն ու վարչէջքները ու  
ապա հայրական յորդորներ ու զիջեց աշակերտնե-  
րուն, մաղթելով որ անոնք ըլլան սիրաբոյսի  
մէջ մէկ քաջարի պահակներ ազգային այս դա-  
բաւոր ու փառաւոր Հաստատութեան: Կոչ ըրաւ  
ներկայներուն որ ոչինչ խնայել Վարժարանի բա-  
րեքին համար, որպէսզի ան վերագտնէ երբեմնի  
իր փայլուն ու նախանձիլի զիրքը: Հանդէսը  
փակուեցաւ Տէրուսկան Աղօթքի միարեբան  
երգեցողութեամբ:

ԱՄՍԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՆԳԷՍ  
Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐՓԱՐԱՆԻ

17 Յուլիս, Կիրակի կէտրէ վերջ ժամը 5ին,  
Ժառնգ. Վարժարանի բակի նինաւորց մայրիկն  
ներքև հաստատուած շարժական բեմին վրայ  
տեղի ունեցաւ Ս. Թ. Վարժարանի Ամալիւրի  
Հանդէսը, նախագահութեամբ Պատր. Տեղապահի  
Փոխանորդ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմհանեանի:

Աւելի քան երկու ժամեր տեղի հանդէսի  
ընթացքին յաջող կերպով տեղի ունեցան արտա-  
ստեղծութիւններ, միջբնիկ տրամախօսութիւններ,  
մարզանքներ, հայկական պարեր, և այլն: Վար-  
ժարանի ընթացաւարտ դասարանէն և Մանկա-  
պարտեզի աշակերտութիւնէն: Հանդէսի աւար-  
տին, Վարժարանի ամ. Տեսուչ Լոգ. Տ. Յակոբ  
Վրդ. Վարդանեան տուաւ հակիրճ տեղեկութիւն-  
ներ զպրօքի տարան մը կեանքի մասին, որով  
ետք նախակրթարանի 23 և Մանկապարտեզի 57  
երկուստ ընթացաւարտները ստացան իրենց վկա-  
յականները, իսկ ուսման իւրաքանչիւր հիւղի  
մէջ յաջողագոյն աշակերտները ստացան մրցա-  
նակներ: Հանդէսը վարձուեցաւ Գեր. Նախագահ  
Սրբազանէն շրջանաւարտներուն ուղղուած խրա-  
տականով ու Վարձուարիչով:

ԱՄՍԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՆԳԷՍ  
ԱՄՍԱՆԻ ԼԵԹՈՒՍԵԱՆ ԱՋԳ. ՎԱՐՓԱՐԱՆԻ

Կիրակի, 10 Յուլիս 1955 առաւօտեան ժամը  
9ին, Ամանի Բնքրա Սինէ-Մայրիկ տեղի ու-  
նեցաւ Լեթուսեան Այգ. Վարժարանի Ամալիւրի  
Հանդէսը, նախագահութեամբ Լոգ. Տ. Հայկա-  
զուն Վրդ. Արքայանքանի:

Հանդէսը սկսաւ Յորդանանեան քայլերով,  
որով ետք վարժարանի Տեսուչ Լոգ. Տ. Կորին  
Վրդ. Մանուէլեան ըրաւ բացման խօսքը: Ապա  
խաղաղութեցաւ ճոխ յայտագիր մը, բաղկացած  
մեներգներէ, խմբերգներէ, արտաստեղծութիւննե-  
րէ, ուղեբաններէ, պարերգներէ: Նախակրթարանի  
իւ Մաղիկ դասարանի աշակերտութեան կողմէ,  
որոնք յայտարար նշաններն էին վարժարանի  
ուսուցչական կազմին տարուան մը խնամքօտ ու  
յարասեւ աշխատանքին: Երկու մասերէ բաղկա-  
ցած այս հանդէսը տեղի աւելի քան երեք ժա-  
մեր: Հանդէսի ընթացքին, նախակրթարանի 17  
և Մանկապարտեզի 30 երկուստ շրջանաւարտները  
ստացան իրենց վկայականները, իսկ հանդէսի  
աւարտին՝ Լոգ. Նախագահ Լոգ. Երմանկանեան  
ըր, որ իր փակման խօսքով կը յորդորէր Ամա-  
նահայ գաղութը չհրժօրէն փարիլ իրենց Մայ-  
րենի Եկեղեցոյն ու Գոլթոյն, որոնք երկու  
մեծագոյն ազգակներն են իրբև ազգ մեր գոյու-  
թիւնը պահպանող:

### Հ Ա Ն Գ Ի Ս Ս

**ԲԱՐՁՐ. Տ. ՌՈՒԲԷՆ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆԱՍԵԱՆԻ**  
(1882-1955)

Ս. Էջմիածնայ, ինչպէս նաև Երուսաղէմի Ս. Աթոռոյ Միաբանութիւնները խորունկ ցաւով կը գուժեն Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի անակնկալ վախճանումը՝ որ տեղի ունեցաւ Կիրակի, 10 Յուլիսի կ. ա. ժամը 2.30ին, Վանուցս իր բնակարանին մէջ, սրտի ցաւէ մը:

Հանգուցեալը որ Էջմիածնայ Միաբան մըն էր, Հայց. Եկեղեցւոյ երկարամնայ իր ծառայութենէն յետոյ 1950ին եկած էր Երուսաղէմ, եւ հիւրաբար կը մնար Ս. Յակոբեանց մենաստանին մէջ:

Հանգուցեալ Տ. Ռուբէն Արքեպս.ի բազմավաստակ կեանքին եւ գործունէութեան պիտի անդրադառնանք Սիոնի յաջորդ թիւով:

Տէրը թող լուսաւորէ Իր Եկեղեցւոյ պաշտօնէին հոգին եւ նոր հովիւներ պարգեւէ Հայց. Եկեղեցիին:

### Հ Ա Ն Գ Ի Ս Ս

**Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ**

**ՎՍԵՄ. ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆԻ**  
(1869-1955)

Ս. Աթոռոյ Միաբանութիւնը խորունկ եւ անկեղծ ցաւով կը գուժէ Վսեմ. Տիար Գալուստ Կիւլպէնկեանի մահը, որ տեղի ունեցած է Յուլիս 20ին, Լիզպոնի մէջ:

Հայ ժողովուրդի մեծանուն զաւկին եւ Ս. Աթոռոյ անզուգական Բարերարին հոգւոյն համար 24 Յուլիս, Վարդավառի տօնին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ի ժամ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն:

Սիոնի Օգոստոսի թիւը ամբողջովին նուիրուած պիտի ըլլայ ազգային բարերար Հանգուցեալ Վսեմ. Գալուստ Կիւլպէնկեանի կեանքին ու գործունէութեան:

تصدرها - بطريكية الارمن الارثوذكس      المدير والمحرر المسؤول - الآب هاكازون أبراهاميان  
طبع في مطبعة دير الارمن - القدس      العدد v

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.  
Editor - Father Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.  
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.





# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Այսու կը հաղորդենք թէ Նորին Սրբազնութիւն վիճակիս առաջնորդ Գերաշնորհ Տ. Մամբրէ Արքեպօ. Գալիֆայեան, Յուլիս 19 1955, Երեքշաբթի կէսօրէ վերջ ժամը 2ին, տեսակցութիւն մը ունեցաւ Արտաքին Գործոց Ենթաքարտուղար Վսեմ. Հըրպըրդ Հուվըր Կրտսերի հետ Նիւ Սթէյթ Տիփարթմէնթի Պալատին մէջ, ի Ուաշինկթըն:

Ընկերակցութեամբ Նիւ Եորք Նահանգի Չրդ Վիճակի Հանրապետական Գոնկրէսմըն Վսեմ. Ստեփան Պ. Տէրունեանի՝ Նորին Սրբազնութիւնը ներկայացուց մագաղաթ մը, որով կ'արտայայտէր Միացեալ Նահանգաց մէջ բնակող 100.000 ծխականներու երախտագիտութիւնը «այն ազատութեանց եւ պատենհոտութիւններուն համար զորս կը վայելն իբրեւ բնիկ եւ քաղաքակցութիւն ընդունած Ամերիկացիներ»:

Արտաքին Գործոց Ենթաքարտուղարի մատուցուած թուղթին մէջ կը կրկնուէր «մեր նուիրումն ու հաւատարմութիւնը Հանրապետութեան սկզբունքներուն»:

Հանդիսաւոր տարազակիր Սրբազան Առաջնորդին կ'ընկերանային Յիլատէլֆիոյ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Հոգևոր Հովիւ Արժ. Տ. Լեւոն Քոյ. Առաքելեան եւ Հայ Տեղեկատու Գրասենեակի Պետ՝ Տիար Աւետիս Տէրունեան:

Գեր. Տ. Մամբրէ Սրբազան ներկայացուց հետեւեալ ծագկագրեալ մագաղաթ հաւատարմագիրը. —

## ԵՐԱՍՏԱՊԻՏԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

Արտաքին Գործոց Գարտուղարի ներկայացուցչութեան հետ մեր տեսակցութեան այս երջանիկ առիթով, թոյլ տուէք, յանուն էջմիածնի պատկառելի Հոգևոր Խորհուրդին ենթակայ Միացեալ Նահանգաց Հայաստաննայց Եկեղեցւոյ վաւերացեալ 48 ծուխերուն եւ մօտաւորապէս 100.000 ծխականներուն, արտայայտել մեր երախտագիտութիւնը այն ազատութեանց եւ պատենհոտութիւններուն համար զորս կը վայելն իբրեւ բնիկ եւ քաղաքակցութիւն ընդունած Ամերիկացիներ, եւ կրկնել մեր նուիրումն ու հաւատարմութիւնը Հանրապետութեան սկզբունքներուն, ուխտամամբ դիմադրել ներքին եւ արտաքին ամէն կարգի բոլոր թշնամիներուն, որոնք, մի արացցէ, կթէ փորձն նախայարձակ դիտաւորութեամբ վնասել մեր սիրեցեալ հայրենիքին:

Եթէ Հայ ծագումով Ամերիկացիներ արենակցական կապերով եւ զգացումներով սերտութեան եզր դնին իրենց նախահարց հայրենիքին՝ Հայաստանի մէջ ապրող իրենց եղբայրներուն հետ, այդ յարումը յաւէտ պէտք է նկատել որդիական ազգակցութեան վերաբերմունք:

Ի դիմաց Միացեալ Նահանգաց իմ հօտին, կարող եմ հաւատարացնել Արտաքին Գործոց Գարտուղարը, թէ որեւէ կասկած չի կրնար ըլլալ իմ ժողովուրդիս հաւատարմութեան նկատմամբ, ըլլայ այդ խաղաղութեան ժամանակ թէ տագնապի ատեն: Մեր սրտերուն մէջ խորապէս արմատացած է հաւատարմութեան ոգին: Մենք Ամերիկացի ենք: Մեր հաւատարմութիւնը սերտիւ աղերս ունի Միացեալ Նահանգաց շահերուն հետ ներկայիս եւ ցվերջ:

Աստուածահանոյ մեր քարոզչութիւնը կը մղէ մեզ որոնել ուղիները խաղաղութեան քան պատերազմի, եւ ատոր համար մենք կ'աղօթենք մեր Նախագահ Այզընհաուերի նուիրական փափաքաց կատարումին:

«Խաղաղ կենակցութիւն հանուր աշխարհի հետ, ըլլալ հաղորդակից բոլորին, սերտել անոնց մշակոյթը, որպէսզի անոնք ալ սորվին մերինը... միայն այդպէս ընելով մեր տղաքը տունը պիտի մնան, եւ մեր աշխատանքին արդիւնքը պիտի յատկացուի յօգուտ մեր դպրոցներուն, մեր ճանապարհներուն, մեր եկեղեցիներուն, եւ ոչ թէ պատերազմական հրազէններու, ռմբածիզներու, ռանկերու եւ ռազմանաւերու»:

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Առաջնորդ Հայոց Հիւսիսային Ամերիկայի

Տուա մեծաւոսոփ Յուլիս 19, 1955 ամի  
յԱռաջնորդութեան մեծամ առաջին ամի  
ի Ուաշինկթըն